# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**(Լրամշակված տարբերակ)**



**Նախաձեռնող՝** «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ

**ՇՄԱԳ հաշվետվության մշակող՝** «Էկոնոմ Էկո» ՍՊԸ

**ԵՐԵՎԱՆ** 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 5

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ .. 6

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՄԱԳ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ........ 11

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ........12

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ........13

5.1 Ենթակա տարածքի նկարագիրը........13

5.2 Շրջակա միջավայրի բնութագրերը........13

5.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը........13

5.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն........15

5.2.3. Կլիմա և օդային ավազան........17

5.2.4. Հողային ռեսուրսներ........22

5.2.5. Ջրային ռեսուրսներ........23

5.2.6. Կենսաբազմազություն........25

5.2.7. Հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ....27

5.2.8. Պատմամշակութային հուշարձաններ........30

5.2.9. Սոցիալ-տնտեսական հարցեր........30

6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ........31

6.1 Շահագործման փուլ........31

6.2 Շինարարության փուլ........36

6.2.1.Ժամանակացույց........37

6.2.2 Շին. հրապարակի կազմակերպում........37

6.3 Բարեկարգում և կանաչապատում........40

7. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ........41

7.1 Ջրօգտագործում........41

7.2 Շինարարական նյութեր........42

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ........................................................................................................ 43
8.1 Օդային ավազան.................................................................................... 43
8.2 Հողային ռեսուրսներ ............................................................................ 48
8.3 Ջրային ռեսուրսներ .............................................................................. 49
8.4 Կենսաբազմազանություն..................................................................... 49
8.5 Թափոնների առաջացում և կառավարում........................................... 49
8.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.............................. 50
8.7 Աղմուկ և թրթռում.................................................................................51
8.8 Արտակարգ իրավիճակներ .................................................................. 53
8.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն .......................................................................................... 53
8.10 Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն ..................... 54
8.11 Սոցիալական հարցեր.......................................................................... 55
9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ ........................... 55
9.1. Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները 55
9.2. Մոնիտորինգ............................................................................... 57
10. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ............................................................ 57
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ............................................................................58
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՍԽԵՄԱ ..........................................65
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԱՐԱԾՔԻ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐՈՎ... 68
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ......................... 74
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ..................................................................................................... 84
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ...................................... 87
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ..................................................................................................96
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ..........................................................................................103
ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ ................106

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԽԵՄԱ ....................................................................................................................107
ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ..................................................................................108

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| **Ծրագրի նպատակը** | Նպատակն է առավել արդյունավետ կերպով իրացնել տվյալ տարածքի նպատակային և գործառնական ներուժը՝ իրականացնելով ժամանակակից ճարտարապետական լուծումներով կառուցապատում և տարածքի բարեկարգում |
| **Նախաձեռնող** | «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ |
| **Նախաձեռնողի կոնտակտային տվյալներ** | «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ<br>հեռ.՝ +374 95 77 79 79<br>էլ. հասցե՝ info@zover.am |
| **ՇՄԱԳ հաշվետվության մշակող ՝** | «Էկոնոմ Էկո» ՍՊԸ, հեռ.՝ +374 94 42 75 23<br>էլ. հասցե՝ economecoeia@gmail.com |
| **Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը** | Կոտայքի մարզ, Նոր Հաճըն համայնք, գյուղ Քանաքեռավան |
| **Հողամասի ընդհանուր մակերեսը** | 25.29221 հա |
| **Կառուցապատման մակերեսը** | 40738 $մ^2$ |
| **Կանաչապատման մակերես** | 112000 $մ^2$ |

## 2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանության ոլորտին առնչվող մի շարք բնապահպանական օրենքներից:

Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

- **ՀՀ Սահմանադրություն (2015).** ըստ 10-րդ հոդվածի՝ ՀՀ ընդերքը և ջրային ռեսուրսները հանդիսանում են պետության բացառիկ սեփականությունը, իսկ ըստ հոդված 12-ի՝ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը, վերականգնումը և բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ հաշվի առնելով կայուն զարգացման սկզբունքները և պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Հոդված 12-ի 2-րդ կետը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:
- **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014)** կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լսումների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության և նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:
- **«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** կարգավորում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման, պաշտպանության և վարչարարության հարցերը:
- **«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008)** սահմանում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը,

վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը:

- **«ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)** կարգավորում է ջրի օգտագործման, պահպանության և սպասարկման հարցերը:
- **«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը** (2005) սահմանում է ջրի ազգային քաղաքականությունը ջրային ռեսուրսների կայուն կառավարման, ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության գերակայությունների, ջրային ռեսուրսների հաշվառման, գնահատման, առաջարկի և պահանջարկի ձևավորման և ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունների ուղղություններով:
- **«ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը (2006)** կարգավորում է ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները՝ ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները:
- **«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004)** կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:
- **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.)** կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- **«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2005)** կարգավորում է ՀՀ-ում պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ:
- **«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքը (2000)** կարգավորում է տնտեսական

գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման արարողակարգերը:

- **«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը (1998)** սահմանում է Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության հիմնադրույթները և կարգավորում այդ գործունեության հետ կապված հարաբերությունները:
- **«Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքը (1999)** սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:
- **«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (1998)** սահմանում է իրավական և քաղաքական հիմքեր ՀՀ-ում մշակութային և պատմական հուշարձանների օգտագործման համար և կարգավորում է հարաբերությունները պահպանության և օգտագործման միջև: Այն նկարագրում է նոր հուշարձանի հայտնաբերման դեպքում կիրառվող ընթացակարգերը, սահմանում է հուշարձանների պետական գրանցման կանոնները, դրանց շուրջ պահպանման գոտու գնահատումը և պատմամշակութային արգելավայրերի ստեղծումը:
- **«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (2006)** սահմանում է Հայաստանի Հանրապետության համալիր կամ առանձին բնական օբյեկտների, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի զարգացման, վերականգնման, պահպանման, վերարտադրության և օգտագործման իրավական հիմքերը և պետական քաղաքականության հարաբերությունները:
- **«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենքը (1999)** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը բուսական աշխարհի պահպանման, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի պետական գույքագրման և պետական մշտադիտարկման իրականացման նպատակները, բուսական աշխարհի Կարմիր գրքի կազմման պահանջները և մոտեցումները, բուսական աշխարհի օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու պայմանները, բուսական աշխարհի պահպանման դրույթները և տնտեսական գործիքները բուսական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման համար:

- **«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքը** **(2000)** սահմանում է ՀՀ պետական քաղաքականությունը կենդանական աշխարհի պահպանման, օգտագործման և վերարտադրության ոլորտներում: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի ուսումնասիրությունների, պետական մշտադիտարկման, պետական գույքագրման նպատակները, կենդանական աշխարհի Կարմիր գրքի կազմման սկզբունքները, կենդանատեսակների օգտագործման պայմանները, օգտագործման իրավունքից զրկելու հիմքերը, կենդանիների պահպանման դրույթները և կենդանական աշխարհի ռեսուրսների կայուն օգտագործման և մշտադիտարկման տնտեսական գործիքները:
- **«Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքը** **(2002)** սահմանում է ՀՀ սեյսմիկ պաշտպանության բնագավառի կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները:
- **ՀՀ Կառավարության որոշում N 121-Ն (2003)** «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին». սահմանում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում է դրա հետ կապված հարաբերությունները:
- **ՀՀ կառավարության N 1343-Ն որոշում (14.09.2006)** «Թափոնների հաշվառման, գոյացման, հեռացման (ոչնչացման, վնասազերծման, տեղադրման) և օգտահանման կարգը սահմանելու մասին»:
- **ՀՀ Կառավարության որոշում N 1059-Ա (25.09.2014)** «Բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և ռազմավարության բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի 1-ի և Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:
- **ՀՀ կառավարության N 1404-Ն որոշում (02.11.2017)** «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- **ՀՀ կառավարության N781-Ն որոշում (31.07.2014)** «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»

- **ՀՀ կառավարության N 385-Ն որոշում (15.03.2007)** «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին»
- **ՀՀ կառավարության N1504-Ն որոշում (25.12.2014)** «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին»
- **ՀՀ կառավարության N426-Ն որոշում (12.04.2018)** «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում 967-Ն ՀՀ (14.08.2008)** «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում N 71-Ն (29.01.2010)** «Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում N72-Ն (29.01.2010)** «Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում 596-Ն (19.03.2015)** ՀՀ-ում «Կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում N2343-Ն (28.12.2023)** «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
- **ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հրաման N-**1243-**Ն (30.09.2015)** «Սեյսմիկ պաշտպանության բնագավառի հատուկ և կարևոր նշանա¬կության օբյեկտները սահմանելու մասին»
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 102-Ն (28.12.2020)** ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N 24-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին
- **ՀՀ առողջապահության նախարարի հրաման N 12-Ն (28.03.2017)** «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին

- **ՀՀ առողջապահության նախարարի հրաման N15-Ն (19.09.2012)** «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային շենքերի» N2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»
- **ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրաման N 43-Ա (05.04.2018)** «Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածուին հավանություն տալու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում N 438 (20.04.2002)** «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգ հաստատելու մասին»
- **ՀՀ կառավարության որոշում N 108-Ն (08.02.2018)** «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

## 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՄԱԳ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվությունն իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան, որում օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
- նախատեսվող գործունեության տարածքում դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության ներկայացում (ներառյալ՝ հանրային լսումների արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

## 4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու է ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Քանաքեռավան գյուղի «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ սեփականություն հանդիսացող 25.29221հա ընդհանուր մակերեսով 07-064-0353-0503, 07-064-0419-0001 և 07-064-0384-0006 կադաստրային ծածկագրերով հողամասերի տարածքում, որտեղ կառուցապատման մակերեսը 0.00 նիշում կազմում է 50300 ք.մ., իսկ կանաչապատման մակերեսը գերազանցում է 41% - կազմելով 110000 ք.մ. (հողամասերի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները ներկայացվում են հավելված 1- ում): Նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ն, որի իրավաբանական հասցեն է ք. Երևան, Կոնդ 1-ին թաղամաս, 44 տուն:

«Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից բազմաֆունկցիոնալ բնակելի թաղամասի կառուցման հաշվետվությունը մշակված է՝ հիմք ընդունելով.

- բնակելի համալիրի նախագծային փաստաթուղթը,
- «համալիրի տեղամասի ինժեներաերկրաբանական հետազոտությունների հաշվետվությունը,
- համապատասխան համաձայնություններն ու թույլտվությունները,
- սեփականության վկայականները,
- Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի կողմից տրված N «18».04.2025թ. ճարտարապետահատակագծային առաջադրանքները:

Նախատեսվող գործունեության նպատակը բազմաֆունկցիոնալ բնակելի թաղամասի կառուցումն է: Գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահող:

# 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

## 5.1 **Ենթակա տարածքի նկարագիրը**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Կոտայքի մարզի, Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի վարչական տարածքում:

Դիտարկվող հողամասի հարևանությամբ հյուսիսային, հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան ուղղությամբ առկա են արոտավայրեր և վարելահողեր, որոնք զերծ են կառուցապատումից: Հարավ արևելյան և հարավ-արևմտյան ուղղությամբ բնակելի կառուցապատման և այգեգործական հողակտորներ են, որոնք մասնակիորեն կառուցապատված են բնակելի տներով և ամենամոտ բնակելի տունը հողակտորի սահմանագծից 15-20 մ հեռավորության վրա է:

Շենքերի և շինությունների միջև հեռավորությունը համապատասխանում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 22 մայիս 2023 թ.-ի N 04-Ն որոշմամբ ամրագրված պահանջներին:

Նախատեսվող գործունեության տարածքն ունի մինչև 30 մ ռելիեֆային տատանումներ: Տարածքը քարքարոտ է, և տարածքում բացակայում է ծառաթփային բուսականությունը, ըստ այդմ տարածքում ծառահատումներ չեն նախատեսվում:

Տարածքում հորատման աշխատանքների ընթացքում ինժեներական հաղորդակցուղիներ՝ կոյուղագծեր, ջրագծեր և այլն չեն բացահայտվել: Տարածքի իրադրային սխեման ներկայացված է Հավելված 2-ում:

## 5.2 **Շրջակա միջավայրի բնութագրերը**

### 5.2.1. **Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը**

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Քանաքեռավան բնակավայրի կենտրոնից մոտ 1.2կմ, Ձովունի բնակավայրի կենտրոնից՝ մոտ 1.3կմ, Երևան քաղաքի բնակելի տարածքներից՝ մոտ 2.78կմ հեռավորությունների վրա: Մոտակա բնակավայրերն են Պտղնին (մոտ 5.0կմ), Գետամեջը (մոտ 6.1կմ) և Արզնին (մոտ 7.7կմ): Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման Մ-4 միջպետական նշանակության ավտոճանապարհը անցնում է կառուցապատման տարածքից 2.78կմ հեռավորության վրա, մոտ 1.3կմ հարավ-արևմուտք (Ձովունի բնակավայրի կենտրոնական հատվածով) անցնում է Երևան -Եղվարդ -Արագյուղ -Հարթավան -Մ3 Հ-4 հանրապետական նշանակության ավտոճանապարհը: Մոտ 1.15կմ հեռավորության վրա է գտնվում Հ-4- Քանաքեռավան-Հ-5 Տ-6-44 տեղական նշանակության ավտոճանապարհը:

Լեռնագրական տեսակետից կառուցապատման նպատակով հայցվող տարածքը իրենից ներկայացնում է լեռնային սարահարթ (Քանաքեռի սարահարթ), որտեղ բարձունքային նիշերը տատանվում են 1100-1600մ սահմաններում:

Սարահարթը արևելքից սահմանազատվում է Ողջաբերդի բարձունքով, հյուսիսից՝ Հատիս լեռով և Ջրաբերի սարահարթով, արևելքից՝ Եղվարդի և Երևանյան սարահարթերով:

Քանաքեռի սարահարթի տարածքում առանձնացվում են երկու տարբեր շրջաններ՝ բլրակա-հարթավայրային և Հրազդանի գետահովիտ:

Կառուցապատման նպատակով հայցվող տարածքը տեղակայված է Քանաքեռի սարահարթի բլրակա-հարթավայրային հատվածում և բնութագրվում է համեմատաբար հանգիստ, հյուսիս-արևելքից-հարավ-արևմուտք մեղմաթեք անկում (մինչև 3 աստիճան անկյան տակ) ունեցող ռելիեֆով: Տարածքի հարաբերական բարձրությունները տատանվում են 1225-1255մ սահմաններում:

**Գեոմորֆոլոգիական տեսակետից** ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում, դրա հարավային եզրամասում, Հրազդան գետի միջին հոսանքի սահմաններում, գետի կիրճի աջափնյա հրաբխային սարավանդի սահմաններում:

Տարածքն իրենից ներկայացնում է հիմնականում բլրաթմբային ռելիեֆով, լանջերի գագաթային մասերում մեծամասամբ հարթ, իսկ ստորոտային մասերում կտրուկ անկումներով լանջերով բնութագրվող գոտի: Հետազոտվող տարածքի հարավային և արևմտյան հատվածներում լանջերն ունեն զգալի մեծ թեքություններ: Անմիջապես հետազոտվող տեղամասը կառուցապատված չէ:

Տեղամասում առկա են նաև կույտերի ձևով լցված լիցքային գրունտներ, որոնք ևս տարածված են տեղամասի հարավային կողմում, մասամբ նաև արևմտյան սահմանային մասերում, վերջիններիս բարձրությունը առանձին դեպքերում հասնում է 2.0 մետրի: Տարածքը հիմնականում հարթ է ռելիեֆի վրա 0.4-0.6 մետր խորությամբ խրամուղիների առկայությամբ: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1214.0-1254.0 մետրի սահմաններում:

**Ջրային ցանցը** տեղամասում քիչ զարգացած է: Լանդշաֆտա-ջրաբանական տեսակետից շրջանը և տարածքը մտնում են Ախուրյան-Հրազդանի շրջանի մեջ: Ջրային խոշոր երակը Հրազդան գետն է, իր բազմաթիվ աջակողմյան և ձախակողմյան վտակներով: Տեղամասի հարավային հատվածում առկա է սելավատարի ձորակ-հեղեղատ, որը տեղամասին հարող հատվածում ձևավորում է 4.0-8.0 խորությամբ ուղղաձիգ լանջերով կիրճ, ներկայացված հրաբխային տուֆերով:

**Հիդրոերկրաբանական պայմանները.** Ջրաերկրաբանական առումով շրջանը և տեղամասը մտնում են Չորրորդականի հասակի հրաբխային գոյացությունների չստորաբաժանված համախմբերի ենթալավային ռելիեֆի փոսերում տեղադրված ենթալավային և միջլավային հզոր ջրահոսքերի և լճա-գետային նստվածքների համախմբերի ջրաբեր հորիզոնների տարածման գոտու մեջ: Ստորգետնյա ջրերը բացահայտվել են մի շարք հորատանցքերում խիստ տարբեր խորությունների միջակայքերում:

Ստորգետնյա ջրերի համար որպես ջրատար շերտ հիմնականում ծառայում են հրաբխային գրունտների հաստվածքի ստորին մասում դրա խիստ հողմնահարված, բեկորային մասը և հրաբխային գրունտների ու կավային

առաջացումների կոնտակտային մասում առկա ավազային և բեկորային գրունտները: Հարկ է նշել, որ որոշ հատվածներում ստորգետնյա ջրերի փոքր ծավալներ դիտվել են նաև կավային գրունտների հաստվածքի հետազոտված խորության ստորին հատվածում, դրա կազմում առկա ավազային ենթաշերտերի մեջ, սակայն դրանք ունեցել են աննշան ծավալներ և ծախս: Տեղամասում կավային գրունտները հանդես են գալիս որպես ստորին ջրամերժ շերտ, որոնց ռելիեֆի վերին հատվածներում և դիտվում են ջրային զանգվածներ:

Համաձայն հորատման աշխատանքների տվյալների ստորգետնյա ջրերի տեղաբաշխումն ունի խիստ մեծ տարբերություններ: Դրանք չունեն ստաբիլ հորիզոն, հանդես են գալիս տեղային հոսքերի տեսքով, ունեն տեղադրման խորության խիստ մեծ տարբերություններ: Հատկանշական է, որ իրար հարող հորատանցքերում ստորգետնյա ջրերը բացահայտվել են տեղադրման խիստ մեծ տարբերությամբ, կամ որոշ հորատանցքերում դրանք ընդհանրապես բացակայել են:

Տեղամասի ստորգետնյա ջրերի սնուցումն իրականացվում է տարածքից հյուսիս, հյուսիս–արևելք տեղակայված լանջերի հատվածում, իսկ բեռնաթափումը տեղի է ունենում տեղամասի հարավային կողմում առկա ձորակի հունային մասերում և Հրազդան գետի կիրճում: Հետազոտվող տեղամասի հարավ–արևելյան եզրամասում ձորակի հունային մասում մասամբ դիտվում է ճահճացած տեղամաս, նշված մասում կավային գրունտները տեղակայված են մակերեսից 1.0-1.5 մետր խորության սահմաններում, ինչի արդյունքում ստորգետնյա ջրահոսքեր դուրս են գալիս մակերես, առաջացնելով գերխոնավացած և ճահճանման տեղամասեր:

### 5.2.2. **Սեյսմիկա և երկրաբանություն**

**Երկրաբանական կառուցվածքը**: Տարածքի և հետազոտվող տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումները՝ բազալտ, անդեզիտա բազալտներ, հրաբխային խարամներ և ավազներ, Միոցենի հասակի ավազներ, կավային գրունտներ: Վերոհիշյալ առաջացումները ծածկված են Չորրորդականի հասակի բերվածքային առաջացումների շերտախմբով, էլյուվիալ-պրոլյուվիալ և էլյուվիալ ծագման առաջացումներով՝ կավավազներ, խոշորաբեկորային գրունտներ, տեխնածին գրունտներ և այլն: Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 20.0 մետր խորությամբ փորված հորատանցքերում բացահայտվել են վերոհիշյալ գրեթե բոլոր գրունտները:

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներաերկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակերը՝

**Շերտ թիվ**-1 լիցքային գրունտ չպառկապնդված (հողա–բուսական ծածկույթ), խճամանրախճային կազմի, հազվադեպ մեծաբեկորներով, կավային և ավազային

նյութի խառնուրդով մինչև 30%, շինարարական, տեղ-տեղ կենցաղային թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.3-2.3 մետր:

**Շերտ թիվ**-2 կարբոնատային կեղև, կավավազ բաց դարչնագույն, դեղնավուն երանգով, կարբոնատացած, սպիտակահողային, տարահատիկ և փոշենման ավազային նյութի խառնուրդով, փոշենման ավազների նրբաշերտերով և ոսպնյակներով, խճի, մանրախճի, հազվադեպ մեծաբեկորների պարունակությամբ, գրունտը վերին մասում ցեմենտացած է, սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.4-1.6 մետր:

**Շերտ թիվ**-3 տուֆ հրաբխային, դարչնագույն և սև, վերին մասերում մասամբ նարնջագույն երանգով, ճեղքավորված, երբեմն մեծաբեկորային, ստորին մասում հողմնահարված խճային, մանրախճային, մասամբ ավազային գրունտների աստիճանի, գրունտը միջին ամրության է, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 2.0-5.0 մետր:

**Շերտ թիվ**-4 խճա-բեկորային գրունտ, հրաբխային ապարներից, կավավազա-ավազային լցանյութով մինչև 30%, տեղ-տեղ կավավազի բներով և ոսպնյակներով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 2.0-5.0 մետր:

**Շերտ թիվ**-5 բազալտ, անդեզիտա-բազալտ մոխրագույն, երբեմն մեծաբեկորային, երբեմն խայտաբղետ երանգներով, ծակոտկեն և ճեղքավորված, տեղ-տեղ միջբեկորային խարամա-ավազային լցանյութով մինչև 15%, ամուր, արմատական տեղադրմամբ, տարածումը համատարած է, միջին հզորությունը՝ 10.0-14.0 մետր:

**Շերտ թիվ**-6 խարամ հրաբխային, խճա-մանրախճային կազմի, մասամբ քայքայված ավազի աստիճանի, կարմրավուն երանգով, խարամացած, շեղջաքարացած բազալտների բեկորներով, վերին մասում մասամբ կավավազային նյութի խառնութդով, միջին խտության, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.7-2.9 մետր:

**Շերտ թիվ**-7 կավ, ավազակավ դարչնագույն, կանաչավուն, մասամբ դեղնավուն երանգներով, պինդ, մասամբ ծիգ պլաստիկ թանձրության, գիպսի մանր և միջին չափի բյուրեղներով, շերտի վերին մասում արգիլիտանման կոշտ առանձնացումներով, փոշենման ավազային նյութի նրբաշերտերով և ոսպնյակներով, գրունտը միջին խտության է, սակավախոնավ և խոնավ, տարածումը համատարած է, հզորությունը՝ 4.0-6.0 մետր:

**Սեյսմա-տեկտոնական տեսակետից** տարածքը տեղադրված է վաղ-ալպիական ծալքավորման մարզի Երևանի միջլեռնային վերադրված ճկվածքի սահմաններում, Հրազդան գետի կիրճի աջակողմյան հարթ տափարակի վրա: Համարվում է Հայկական լեռնաշխարհի ամենասեյսմաակտիվ մարզերից մեկը:

Վտանգավոր ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները և երևույթները՝ կարստ, սողանք, փլուզում և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել հիմքերի վրա, բացակայում են, սակայն անհրաժեշտ ենք համարում նշել,

որ կարբոնատային կեղևի և կավավազի (շերտ թիվ 2), մասամբ խճա-մանրախճային գրունտների և բեկորային գրունտների (շերտեր թիվ 3 և 4), լցանյութը ցուցաբերում են ենթաողողամաշման (суффозия) առանձնահատկություններ, ուստի պետք է մշակել բոլոր տեսակի մակերեսային ջրերի կազմակերպված և կանոնավորված ջրհավաք և ջրհեռ համակարգ, դրանց մուտքը հիմնատակեր բացառելու համար:

### 5.2.3. Կլիմա և օդային ավազան

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտագործվել են ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերում ներկայացված Եղվարդ տարածաշրջանի կլիմայական պայմանների տվյալները:

Տարածաշրջանում տարեկան միջին ջերմաստիճանը 9.7°C է: Ամենատաք ամիսները հուլիսը և օգոստոսն են՝ 22.8°C, ամենասառը ամիսը հունվարն է՝ -4.9°C: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմում է -32.6°C, իսկ բացարձակ առավելագույնը՝ 38.7°C: Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Տարածաշրջանում՝ ամառային ժամանակահատվածում, օդի խոնավություն ցուցանիշները տատանվում եմ 47-76% միջակայքում, միջին տարեկան խոնավությունը՝ 61% է: Օդի հարաբերական խոնավության տվյալները ներկայացված են Աղյուսակ 2-ում:

Եղվարդի տարածաշրջանում միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 445մմ: Ամենաանձրևոտ ամիսը մայիսն է՝ 64մմ: Նվազագույն տեղումների քանակը դիտվում է օգոստոս ամսին՝ 13մմ: Տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները բերված են ստորև Աղյուսակ 3-ում:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում ձնածածկույթով օրերի քանակը 74 է, իսկ ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը 68սմ է: Տվյալները ներկայացված են Աղյուսակ 4-ում:

Եղվարդի տարածաշրջանում քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է հուլիս ամսին հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ 5.5 մ/վ արագությամբ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը ստացվում է հուլիս ամսին և կազմում է 4.8 մ/վ: Քամու ուղղությունների ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս ամսին հյուսիս-արևելյան ուղղությամբ և կազմում է 73%: Քամու վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 5-ում:

*Աղյուսակ* 1. *Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C*

| Բնակավայրի անվանումը | Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| **Եղվարդ** | -4.9 | -2.8 | 2.7 | 9.4 | 14.4 | 18.9 | 22.8 | 22.8 | 18.6 | 11.8 | 4.8 | -1.7 | 9.7 | -32.6 | 38.7 |

*Աղյուսակ* 2. *Օդի հարաբերական խոնավության տվյալները*

| Բնակավայրի անվանումը | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | Միջին ամսական | Միջին ամսական ժամը 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական ժամը 15-ին |
| **Եղվարդ** | 75 | 71 | 65 | 61 | 60 | 53 | 49 | 47 | 49 | 59 | 70 | 76 | 61 | 75 | 66 | 49 | 34 |

***Աղյուսակ** 3. Մթնոլորտային տեղումները, %*

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ | | | | | | | | | | | | | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | Տարեկան | | |
| Եղվարդ | 35 | 36 | 44 | 60 | 64 | 39 | 26 | 13 | 17 | 40 | 35 | 36 | 445 | 186 | 259 |
| | 30 | 31 | 42 | 40 | 42 | 29 | 53 | 45 | 35 | 39 | 37 | 28 | 53 | | |

***Աղյուսակ** 4. Ձյան ծածկույթ*

| Բնակավայրի անվանումը | Ձյան ծածկույթը | | | |
|---|---|---|---|---|
| | Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ | Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը | Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ | Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **Եղվարդ** | 68 | 74 | 156 | 79 |

***Աղյուսակ** 5. Քամի*

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիությունը, % / Միջին արագությունը, մ/վ | | | | | ըստ ուղղությունների | | | Անդորրի կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հյուսիսային | Հյուսիս-արևելյան | Արևելյան | Հարավ- արևելյան | Հարավային | Հարավ-արևմտյան | Արևմտյան | Հյուսիս- արևմտյան | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| **Եղվարդ** | Հունվար | 6 | 48 | 11 | 3 | 15 | 6 | 9 | 2 | 40 | 1.1 | ՀսԱրլ | 5.7 | ՀսԱրլ | 1.8 |
| | | 1.7 | 1.8 | 1.7 | 1.5 | 1.7 | 1.9 | 1.8 | 1.7 | | | | | | |
| | Ապրիլ | 5 | 48 | 7 | 3 | 17 | 10 | 8 | 2 | 23 | 2.6 | | | | |
| | | 3.0 | 3.8 | 2.7 | 2.4 | 2.4 | 2.8 | 2.7 | 2.1 | | | | | | |
| | Հուլիս | 6 | 73 | 4 | 1 | 7 | 4 | 4 | 1 | 11 | 4.8 | | | | |
| | | 4.9 | 5.5 | 4.9 | 1.7 | 3.0 | 2.5 | 3.0 | 1.8 | | | | | | |
| | Հոկտեմբեր | 5 | 55 | 6 | 3 | 16 | 8 | 6 | 1 | 31 | 1.9 | | | | |
| | | 2.7 | 3.1 | 2.1 | 1.9 | 1.9 | 2.3 | 1.8 | 2.2 | | | | | | |

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման համաձայն:

Շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգի շրջանակներում Քանաքեռավան բնակավայրում մթնոլորտային օդի մշտադիտարկումներ չեն կատարվում: Ուստի, բնակավայրերի օդային ավազանի աղտոտվածության մասին պատկերացում կարելի է ստանալ օգտվելով «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից, որում ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի բնակչության քանակից: Քանի որ Քանաքեռավան բնակավայրի բնակչության թիվը չի գերազանցում 10.000 մարդը, կունենանք հետևյալ պատկերը՝

- Փոշի- 0.071 մգ/մ$^3$
- Ծծմբի երկօքսիդ ($SO_2$) – 0.006 մգ/մ$^3$
- Ազոտի երկօքսիդ ($NO_2$) – 0.023 մգ/մ$^3$
- Ածխածնի օքսիդ (CO)- 0.8 մգ/մ$^3$:

Նախատեսվող գործունեության արդյունքում՝ ԲԿՊ-ով սահմանված միջոցառումների պատշաճ իրականացմամբ, օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի կանխատեսվում:

### 5.2.4. **Հողային ռեսուրսներ**

Կոտայքի մարզի հողաբուսական ծածկույթը բավականին խայտաբղետ է: Գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, բարձրադիր վայրերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը: Սարավանդներին բնորոշ են շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերին սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստաններ: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածվում են գորշ դարչնագույն հողերը: Բարձրադիր լեռնային գոտուն բնորոշ է լեռնամարգագետնային լանդշաֆտը: Գետահովիտներում կուլտուրացված ոռոգվող հողեր են: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրերը: Լավ են արտահայտված բնական լանդշաֆտային գոտիները:

Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր: Հողերի կլանման տարրողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Կոտայքի մարզում 1400-1500մ բարձրությունների վրա գերիշխում են լեռնատափաստանային հատվածները, որոնց հողածածկույթը տիպիկ և մուգ լեռնային շագանակագույն, ինչպես նաև տիպիկ լեռնային սևահողեր են: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,22-1,25 գ/սմ$^3$ սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,6-2,63գ/սմ$^3$ սահմաններում: Հողի ծակոտկենությունը՝ 52,4-53,0%, դաշտային սահմանային խոնավունակությունը՝ 27,7-28,0% սահմաններում: Իսկ 1500մ բարձրությունների վրա՝ հողածածկույթը կազմում են կրազերծված լեռնային սևահողերը և սևահողանման լեռնային մարգագետնատափաստանային հողերը: Ըստ մեխանիկական կազմի՝ միջակ և ծանր կավավազային հողեր են: Հողի խտությունը տատանվում է 1,17-1,20 գ/սմ$^3$, սահմաններում, հողի տեսակարար կշիռը՝ 2,51-2,60 գ/սմ$^3$ սահմաններում, հողի ծակոտկենությունը՝ 53,3-53,8 %, դաշտային սահմանային խոնավունակությունը՝ 29,3-32,0% սահմաններում:

Նախատեսվող գործունեության տարածքում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2022 թվականի 2-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են նաև Կոտայքի մարզում:

Կոտայքի մարզում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.5-2.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 17.0-46.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.1-12.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 4.3-26.7 անգամ, նիկելի պարունակությունը՝ 9.3-28.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.3-2.1 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-10.0 անգամ:

Կառուցապատման նպատակով հայցվող հողերի մետաղներով հնարավոր աղտոտվածությունը պարզելու համար կատարվել է նմուշարկում: Տարածքից վերցված նմուշում ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի թիվ 01-Ն հրամանի հավելվածի աղյուսակ 1-ում նշված մետաղներից արձանագրվել է պղինձ 0.8մգ/կգ, ցինկ 7.5մգ/կգ, մանգան 67մգ/կգ, նիկել 1.1մգ/կգ, քրոմ 2.1մգ/կգ:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի հողի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահողեր:

### 5.2.5. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է ջրավազանային կառավարման 6 տարածքների միջոցով: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների 151 դիտակետ:

Տարածաշրջանի գետերը պատկանում են Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքին: Ստորև ներկայացնում ենք Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքում ջրի որակի մոնիթորինգի 2023թ. 4-րդ եռամսյակի արդյունքները: Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում. այդ թվում՝ 13 գետային. 2 ջրամբարային և մեկ 1 ջրանցքի:

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

*Քասախ* գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

*Գեղարոտ* գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

*Շաղվարդ* գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

*Հրազդան* գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

*Գետառ* գետի ջրի որակը գետաբերանում հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

*Մարմարիկ* գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանում՝ հոկտեմբերին և նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

*Ծաղկաձոր* (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Հրազդանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում Դաշտավան, Հովտաշատ, Հովտաշեն և Սիս համայնքների N1526, N1523 N2008, N1535, N1536 դիտակետերում ջրերի ծախսերը ավելացել են 0.01-0.48լ/վ սահմաններում: Մասիսի N1519 դիտակետում նույնպես ավելացում է նկատվել, դեկտեմբեր ամսին ծախսը կազմել է 5.14լ/վ, իսկ Հովտաշենի N2053 դիտակետում ծախսը 0.7 լ/վ-ից ավելանալով հասել է 1.29լ/վ: Սիս համայնքի N78, Ջրահովիտի N2004 և Հայանիստի N2005 դիտակետերում դիտվել են ջրի մակարդակի բարձրացումներ 0.04-0.17մ սահմաններում: Արարատյան դաշտի նախալեռնային գոտու՝ Արագածի N2085, Փարպի N2119 դիտակետերում դիտվել է ջրի մակարդակների նվազում 0.82-1.26մ, իսկ Լեռնամերձի N2088 և Դողսի N2086 հորատանցքերում նկատվել է աննշան բարձրացման միտում: Փարպիի N2119 հորատանցքում ջրի մակարդակը բարձրացել է 0.44մ-ով: Աղավնատան N2087

դիտակետում դիտվել է ջրի մակարդակի գրեթե կայուն վիճակ: Հրազդանի ՋԿՏ-ի Կարբի N1636, Բջնի N246, Սոլակի N1297, N1832 բնաղբյուրներում դիտվել են ծախսի իջեցումներ, ք.Երևանի N970 դիտակետում նկատվել է 0.37լ/վ-ով ծախսի իջեցում, իսկ Ղազարավանի N755 աղբյուրի ջրի ծախսը կայուն է՝ 2.9լ/վ: Ապարանի N2051 և N2107 դիտակետերում նույնպես դիտվել են ծախսերի իջեցումներ: Նիգավանի N2010, N2011 դիտակետերում մակարդակների իջեցումներ են դիտվել՝ համապատասխանաբար 0.88մ և 0.35մ: Բյուրականի N2108 դիտակետում դիտվել է ծախսի գրեթե կայուն վիճակ՝ իջեցման միտումով, իսկ Բուժականի N2105 դիտակետում ծախսը նվազել 0.16լ/վ-ով և կազմել է 0.8լ/վ: Ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է 13 դիտակետում: Մասիսի N1519, Հովտաշենի N2053 դիտակետերում հանքայնացումը, իսկ Ջրահովիտի N2007 դիտակետում՝ հանքայնացումն ու սուլֆատ իոնների պարունակությունը գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները:

Նախատեսվող գործունեության արդյունքում ջրային ավազանի աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում: Բացի այդ, ԲԿՊ-ում նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազեցմանը/կանխմանը:

### 5.2.6. Կենսաբազմազություն

**Բուսական աշխարհ:** Նախատեսվող գործունեության տարածաշրջանը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Հայաստանի Հանրապետության Երևանի ֆլորիստիկ շրջանին: Բուսականության հիմնական տիպը լեռնատափաստանայինն է: Հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքերը, նաև հրդեհները բացասաբար են ազդում հանրապետության բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա:

Տարածաշրջանի անտառային էկոհամակարգերին բնորոշ են կաղնուտային, բոխուտային լայնատերև խառը անտառները ու հետանտառային նոսրաանտառները: Այստեղ աճում են Կաղնի խոշորառէջը(Quercus macranthera), բոխի (Carpinus betulus), բոխու տեսակներ (Aser campestre, Aser trautvetteri), արոսենի (Sorbus umbelata) և այլ՝ հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, ալոճենի, մասրենի, հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենի (Pyrus sp., P. georgica, P.communis) և խնձորենի (Malus silvestres): Կանաչապատ տարածքներում հանդիպում են եղևնի, նոճի, արևմտյան գիհի, կենսածառ արևելյան, սպիտակ/ լացող ուռենիներ, հացենի, լորենի: Թփուտներից տարածված են յասամանը, հաղարջը, նեղտերև փշատենի և այլն: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները: Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում լեռնատափաստանային տարախոտեր են, հացազգիների գերակշռությամբ՝ ոզնախոտ (Dactylis Woronovii),

սեզ տափաստանային (Phleum phleoides), դաշտավլուկ սոխուկավոր (Poa bulbosa), կելերիա սանրաձև (Koeleris cristata), ցորնուկ ցցամազ (Bromus squarrosus), շյուղախոտ ակոսավոր (Festuca sulcata), մերձալպյան բարձրախոտերից՝ իշառվույտ նեապոլիտական (Melilotus neapolitanus), եղինջ երկտուն (Urtica dioica), ծվծվուկ կտրտված (Silene multifida) և այլն:

Կոտայքի մարզի և տարածաշրջանի ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ Ճավշիր պարսկական (Opopanax persicus Boiss). Ճարտարուկ Արարատի (Draba araratica Rupr), Ճարտարուկ խոզնավոր(Draba hispida Willd), Էվնոմիա կլորատերև (Eunomia rotundifolia C. A. Mey. ), Ջրահարս փոքր (Najas minor), Աղածաղիկ Կուլպական (Halanthium kulpianum (K. Koch Bunge), Երնջակա Վանատուրի(Eryngium wanaturii Woronow), ոզնաթուփ վարսակային (Acantholimon avenaceum), Տերեփուկ Թախտաջյանի (Centaurea Takhtajanii) և այլն: ՀՀ կարմիր գրքում ներառվել է նաև Գառնառվույտ լազիստանյան- Oxytropis lazica Boiss տեսակը: Կատեգորիա. EN B 1 ab(i,ii,iii) +2ab(i,ii,iii), վտանգված տեսակ է, տարածման և բնակության շրջանների մակերեսը 500քառ. կմ-ից պակաս է: Արեալը խիստ մասնատված է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգծված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգծված չէ:

Նախատեսվող գործունեության տարածքում դիտարկվել են փետուկային (Festuca valesiaca) խմբավորումներ, բարակոտիկ կատարավոր (Koeleria cristata), կրակ խայտաբղետ (Bromus variegata), դաշտավլուկ սոխուկավոր (Poa bulbosa), ճիլ տափաստանային (Phleum phleoides), երիզախոտ երկարամազ (Taeniatherum crinitum), պրանգոս նարդեսանման (Prangos ferulacea), փետրախոտ Լեսինգի (Stipa lessingiana): Նշվել են մասրենում (Rosa canina), մոշենու (Rubus saxatilis) և ալոճենու (Crataegus orientalis) առանձին աճող թփեր:

**Կենդանական աշխարհ:** Տարածաշրջանի կենդանական աշխարհին բնորոշ են անողնաշարավորների՝ միջատների, բզեզների, մորեխների տեսակային բազմազանությունը: Ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են կրիաներ, օձեր, մողեսներ, թռչուններից՝ սև անգղ, կեռնեխ, արտույտ, կաքավ, ծիծեռնակ, ճանճորսներ և այլն, կաթնասուններից՝ եղջերու, գայլ, գորշ արջ, վայրի խոզ, աղվես, աքիս, կզաքիս, չղջիկներ և այլն:

Կոտայքի մարզում ՀՀ Կարմիր գրքում գրանցված են անողնաշար կենդանիների՝ 62, ողնաշարավոր կենդանիների 28 տեսակներ: Հրազդան գետի ակունքներում գտնվում է ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված Հարթ խխունջը (Gyraulus laevis): Կոտայքի մարզում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված են՝

- Կենդանատեսակներից Մորեխ հայկականը (Gomphocerus armeniacu), Հաստածղրիդ լայնացած (Bradyporus dilatatus), Թամբակուրծք թարախահան (Mylabris sedilithorax Sumakov), Երևանյան սևամարմին (Cylindronotus erivanus),

Ապոլոն (Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko), Աֆրիկյան փրոթերեբիա (Proterebia afra hyrcana), Ալեքսանդր երկարաչափ թիթեռ (Eupithecia alexandriana Wardikian), Ռավազինի մրջյուն (Myrmica ravasinii Finzi), Հայկական իժ (Viperaa (Montivipera), Երկարոտն սցինկ (Eumeces schneideri):

- Թռչուններից՝ գառնանգղ (Gypaetus barbatus Linnaeus), Գիշանգղ (Neophron percnopterus Linnaeus), Օձակեր արծիվ (Circaetus gallicus), Տափաստանային արծիվ (Aquila nipalensis orientalis Hodgson), Կարմրաոտ բազե (Falco vespertinus Linnaeus), Բվեճ (Bubo bub) և այլն:
- Երկկենցաղներից Կանաչ դոդոշը (Bufo viridis), Սովորական ծառագորտը (Hyla arborea schelkownikowi), Լճագորտը (Pelophylax ridibundus) և Փոքրասիական գորտը (Rana macrocnemis),
- Կաթնասուններից՝ Գորշ արջը (Ursus arctos Linnaeus):

Տարածաշրջանի ջրային ավազաններում հանդիպում են կարմրախայտ, քուռի բեղլու, կողակ և այլ ձկնատեսակներ:

Տարածաշրջանում գերակշռում են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերով և վերջիններիս բնորոշ կենդանական աշխարհով:

Տարածքի դաշտային զննման ընթացքում սողուններից դիտարկվել են սովորական լորտու և իլիկաօձ, կաթնասուններից՝ դաշտամուկ: Բազմազան է միջատների, հատկապես բզեզների ֆաունան, արձանագրվել է Carabus gotschi Chaud., Bembidion transparens Gebl., Agonum brachyderum Chaud., Cicindela asiatica Brulle, Amara aenea Deg., Aphodius luridus F., Mylabris variabilis Pall.: Ցերեկային թիթեռներից նշվել է Carcharodus alceae Esp., Lycaena phlaeas L.:

ՀՀ բույսերի և ՀՀ կենդանիների կարմիր գրքերում Քանաքեռավան բնակավայրը որպես պահպանվող կարգավիճակ ունեցող բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների աճելավայր կամ ապրելավայր նշված չէ:

Միաժամանակ, հայցվող տարածքը երկար տարիներ օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով, ինչի արդյունքում բնական («առաջնային») բուսածածկը խախտված է, կենդանական աշխարհի տեսական կազմը և քանակությունը՝ խիստ փոփոխված: Այնուամենայնիվ, հնարավոր ազդեցությունները կանխելու նպատակով Բնապահպանական միջոցառումների մոնիտորինգի պլանով նախատեսվում է համապատասխան միջոցառում՝ ուղղված բուսական և կենդանական աշխարհի պահպանությանը:

### 5.2.7. **Հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ**

Կոտայքի մարզի տարածքում են գտնվում «Խոսրովի անտառ» և «Էրեբունի» պետական արգելոցները, Բանքսի սոճու, Արզական-Մեղրաձորի, Հանքավանի

ջրաբանական արգելավայրերը և «Ջրվեժ» անտառապարկը: Վերոնշյալ պահպանվող տարածքները նախատեսվող գործունեության տարածքի հետ անմիջական սահմաններ չունեն և գտնվում են նորմատիվներով սահմանված և ավել հեռավորության վրա:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Կոտայքի մարզում կան 33 բնության հուշարձաններ, որից 20-ը՝ երկրաբանական, 5-ը՝ ջրաերկրաբանական, 4-ը՝ ջրագրական, 1-ը՝ բնապատմական և 3 ը՝ կենսաբանական:

***Աղյուսակ** 6. Եղվարդի բնության հուշարձանների ցանկ*

| | **Երկրաբանական հուշարձաններ** | |
|---|---|---|
| 32. | «Անանուն» խզվածքներ | Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ |
| 33. | Ծաղավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ | Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ |
| 34. | «Ծաղավորանիստ» խարամային կոն | Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում |
| 35. | «Պեռլիտե փիղ» քարե քանդակ | Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ |
| 36. | «Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ | Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում |
| 37. | «Ծակ քար» բնական թունել | Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին |
| 38. | «Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ | Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| 39. | «Անանուն» քարայր սյունաձև բազալտներում | Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| 40. | «Անանուն» լանջային էրոզիա | Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին |
| 41. | «Անանուն» լավային ծալքեր | Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում |
| 42. | «Անանուն» խորշեր | Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ |
| 43. | «Հատիս» հրաբուխ | Կոտայքի մարզ, Ձովաշեն գյուղից 2.0 կմ արմ |
| 44. | «Ավազան» հրաբխային գմբեթ | Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ |
| 45. | «Կարենիս» հրաբխային գմբեթ | Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ |
| 46. | «Անանուն» ապարների բնորոշ մերկացում | Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև |
| 47. | «Անանուն» օբսիդիանի ելքեր | Կոտայքի մարզ, Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում |
| 48. | «Անանուն» քարե կուտակումներ | Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում |

| | | |
|---|---|---|
| 49. | «Գութանասար» հրաբուխ | Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ |
| 50. | «Լեռնահովիտ» քարային կուտակումներ | Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ |
| 51. | Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա | Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր |
| | **Ջրաերկրաբանական հուշարձաններ** | |
| 11. | «Հաղպրտանք» աղբյուր | Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա |
| 12. | «Համով» աղբյուր | Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա |
| 13. | «Քաղցր» աղբյուր | Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա |
| 14. | «Ձորի» աղբյուր | Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա |
| 15. | «Ավազան» աղբյուր | Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա |
| | **Ջրագրական հուշարձաններ** | |
| 9. | «Սագերի» լիճ | Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս |
| 10. | «Վիշապա» լիճ | Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ |
| 11. | «Բազմալիճք» լիճ | Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս |
| 12. | «Լուսնալիճ» լիճ | Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ |
| | **Բնապատմական հուշարձաններ** | |
| 7. | «Ողջաբերդ» բնապատմական համալիր | Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում |
| | **Կենսաբանական հուշարձաններ** | |
| 6. | «Ռելիկտային կրկես Քյորօղլի լեռան մոտ» | Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ |
| 7. | «Ալպյան գորգ» | Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանա-պարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպա-սարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա) |
| 8. | «Թանթրվենի, Տիգրանի» | Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա |

Վերոնշյալ բնության հուշարձանները գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից նորմատիվներով սահմանված հեռավորության վրա, ըստ այդմ բնության հուշարձանների վրա ազդեցություն չի կանխատեսվում:

**Անտառային ռեսուրսներ**. ՀՀ Կոտայքի մարզում է գտնվում Հրազդանի անտառտնտեսությունը, որը կազմավորվել է 1931 թվականին: Ընդգրկում է 7 անտառպետություններ՝ Մեղրաձորի 7187հա, Ծաղկաձորի 4003հա, Արզականի 8187հա, Բուժականի 1968հա, Արզնիի 2427հա, Երևանի 385հա և Էրեբունու 468հա: Անտառտնտեսության ընդհանուր տարածքը կազմում է 24625հա :

Անտառտնտեսության տարածքում հանդիպում են հիմնականում կաղնի, կաղնի-բոխուտային և խառը խառուտները: Գերակշռող ծառատեսակներն են արևելյան կաղնին, կովկասյան բոխին, սրապտուղ հացին, դաշտային թխկին, մանրատրև լորին, անտառային կաղամախին, Լիտվինովի կեչին: Հանդիպում են կովկասյան տանձենի, տերևաշատ թեղին, սրատերև թխկին: Անտառային հողերը գտնվում են հայցվող տարածքից 1.49-3.5կմ հեռավորությունների վրա:

## 5.2.8. Պատմամշակութային հուշարձաններ

Քանաքեռավան բնակավայրի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների» ցանկում ներառված է ընդամենը 10 հուշարձան (4 միավոր):

Բնակավայրի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների» ցանկը ներառում է գյուղատեղի (7-17-րդ դդ.), վաղ միջնադարյան «Տիվ-Տիվի վանք» վանական համալիրը, միջնադարյան կամուրջը, գերեզմանոց և Երկրորդ աշխարհամարտի հաղթանակի 40-ամյակին նվիրված հուշակոթողը:

Նախատեսվող գործունեության տեղամասի տեղազննության ընթացքում հուշարձաններ չեն հայտնաբերվել, իսկ բնակավայրի պատմամշակութային հուշարձանները նախատեսվող գործունեության տարածքից գտնվում են նորմատիվներով նախատեսված և ավել հեռավորության վրա:

Կառուցապատվող տարածքում հնագիտական ուսումնասիրություններ, համաձայն «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի (11.11.1998թ.) հոդված 24-ի դրույթների, չեն պահանջվում:

## 5.2.9. Սոցիալ-տնտեսական հարցեր

Նոր Հաճըն բազմաբնակավայր համայնքը ձևավորվել է Նոր Հաճըն, Թեղենիք, Քարաշամբ, Նոր Գեղի, Գետամեջ, Նոր Արտամետ, Մրգաշեն և Քանաքեռավան նախկին համայնքների միավորումից:

Ազդակիր Քանաքեռավան բնակավայրը հիմնադրվել է 1958 թվականին՝ Քանաքեռի կոլտնտեսության բազայի վրա: 1963թ.-ին հիմնադրվել է Քանաքեռավանի միջնակարգ դպրոցը, 1980-ական թթ.-ին՝ մանկապարտեզը, 1996թ.-ին՝ արվեստի դպրոցը: Գործում է առողջության առաջնային պահպանման կենտրոն: Բնակավայրը ապահովված է խմելու ջրով (Արզականի ջրամբարից), ոռոգման ներտնտեսային ցանցով, բնական գազով, էլեկտրականությամբ:

Բնակավայրը գտնվում է ծովի մակարդակից 1250մ բարձրության վրա: Քանաքեռավանը իր վարչական սահմաններով սահմանակից է Ջովունի, Մարգաշեն, Գետամեջ բնակավայրերին և Երևան մայրաքաղաքին: Քանաքեռավանի բնակչությունը 4195 մարդ է: Բնակավայրում ապրում են հայեր և եզդիներ: Քանաքեռավան բնակավայրի վարչական սահմանը կազմում է 1705.48հա:

Բնակավայրի տարածքով անցնում է Չարենցավան կոյուղու կոլեկտորը, Գյումուշ-Երևան խմելու ջրագիծը, Արզնի-Շամիրամ ոռոգման ջրանցքը (մոտ 3.8կմ):

# 6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ

Նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու է ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Քանաքեռավան գյուղի «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ սեփականություն հանդիսացող 25.29221հա ընդհանուր մակերեսով 07-064-0353-0435, 07- 064-0353-0436, 07-064-0419-0001 և 07-064-0384-0006 կադաստրային ծածկագրերով հողամասերի վրա հողակտորներում (մակերեսն է 25.29221 հա), որտեղ կառուցապատման մակերեսը 0.00 նիշում կազմում է 50300 ք.մ., իսկ կանաչապատման մակերեսը գերազանցում է 41% -կազմելով 110000 ք.մ.(հողամասերի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները ներկայացվում են հավելված 1- ում): Կառուցապատման մակերեսը կիսանկուղային հարկերի մակարդակում կազմում է 64500ք.մ.:

## 6.1 **Շահագործման փուլ**

Բնակելի համալիրը բաղկացած է շուրջ 60 բնակելի շենքերից, 100 մուտքերով, որոնց հարկայնությունը կազմում է 8 վերգետնյա և 1-3 կիսանկուղային հարկերից: Բնակելի շենքերը իրականացված են նմանատիպ լուծումներով և իրենցից ներկայացնում են 2 տիպի բնակելի շենքեր՝ տարբեր կողմնորոշմամբ տեղակապումներով:

Շենքերի հարկայնությունը հիմնականում ընդունված է 10-12հարկ, որից 1-3-ը՝ կիսանկուղային (կարող է դիտարկվել մինչև 16 հարկանի շենքերի կառուցումը): Ընդհանուր նախագծված են 50-85 ք.մ. մակերեսով թվով 4509 հատ բնակարան:

Կառուցապատման գլխավոր հատակագիծը, 1-ին և տիպային հարկերի հատակագծերը ներկայացված են հավելված 8-ում:

Բարձրահարկ շենքերի տակ նախատեսված է 14000ք.մ. ընդհանուր մակերեսով 1100 հատ ստորգետնյա ավտոկայանատեղիների կազմակերպում: Նախատեսված են նաև 2200 հատ բացօթյա կայանատեղիներ:

Ստորգետնյա ավտոկայանատեղիի հարկերը արտակարգ իրավիճակների ժամանակ կարող են ծառայել որպես ապաստարան: Հարկերում առկա ծխահեռացումը առանձնացված է, առկա հակահրդեհային բաքերը կարող են ապահովել ջրի պահանջը: Աստիճանավանդակների դռները հակահրդեհային են և ինքնափակվող:

Առաջին հարկի հատակի ծածկը առաջին տիպի հրակայունության աստիճանի է: Կառույցների տանիքները հարթ են՝ կազմակերպված ներքին ջրահեռացմամբ: Տանիքներում կան առանձին շինություններ՝ աստիճանավանդակային սենքեր: Շենքերի կոնստրուկցիաները կառուցվելու են ե\բ-ից մոնոլիտ հիմնակմախքով: Երեսապատումը նախատեսվում է նստվածքային և հրաբխային ծագման ապարների (տրավերտին, տուֆ) և ներկանյութի համադրությամբ ստացված նյութերով, բարձրակարգ ֆասադային ապակիով, լանդշաֆտային դիզայնի տարատեսակ լուծումներով, բարեկարգված բակային տարածքներով, ինչի արդյունքում կստեղծվի ակտիվ կենսագործունեության համար հարմարավետ և բարենպաստ միջավայր:

Ամրանային ձողերը, մետաղական կոնստրուկցիաները լինելու են իրանական և ռուսական արտադրության, ձեռք են բերվելու և տեղական ներմուծողներից և սեփական ներմուծումների միջոցով:

Հիմնակմախքները լինելու են սեփական արտադրության, ինչպես նաև նախատեսվում է ռուսական ու իրանական հիմնակմախքների ներմուծում: Շաղախները և բետոնային խառնուրդները լինելու են սեփական արտադրության, որը կազմակերպվելու է շինհրապարակում: Ժամում բետոնի արտադրողականությունը կազմելու է 35 խ.մ: Ներքին հարդարման նյութերը լինելու են իրանական և ռուսական արտադրության, ձեռք են բերվելու և տեղական ներմուծողներից և սեփական ներմուծումների միջոցով:

Շենքերի հիմքերը և նկուղային հարկերի բոլոր կոնստրուկցիաները նախատեսվում է իրականացվել ջրակայուն տիպի բետոնով:

Նախագիծը մշակվել է ՀՀՇՆ IV-11.07.01.2008 (ՄՍՆ 3.02-05.2003), շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շենքերն ու շինությունները հարմարեցված են ԲՍԽ խմբերի անխոչընդոտ շարժն ապահովելու համար: շենքի մուտքերի մոտեցումները, ինչպես նաև ստորգետնյա ավտոկայանատեղիների ելքերը հարմարեցված են սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Բնակելի շենքերի մուտքային հանգույցները ապահովված են թեքահարթակներով և վերելակներով: Հասարակական տարածքներից յուրաքանչյուրում նախատեսված է սանհանգույց սակավաշարժ խմբերի համար:

Նախագծով նախատեսվում է նաև տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: Տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացված են ստորև Աղյուսակ 7-ում:

***Աղյուսակ** 7. Նախատեսվող գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները*

| Տեխնիկատնտեսական ցուցանիշներ | Մակերես |
|---|---|
| 1. **Ընդհանուր հողամասի մակերես** | 252922.1 մ$^2$ (100%) |
| 2. **Ընդհանուր կառուցապատման մակերես** | 50300.0 մ$^2$ |
| 3. **Կառուցապատման մակերես** | 31400.0 մ$^2$ (12.41 %) |
| 4. **Կանաչապատման մակերես** | 104896.0 մ$^2$ (41.479 %) |
| 5. **Ճանապարհներ և սալվածքներ** | 116626.1 մ$^2$ (46.111%) |
| 6. **Ստորգետնյա հարկերի կառուցապատման մակերես** | 54295.0 մ$^2$ (բնակելի շենքերի ստորին մաս) + 12662 մ$^2$ (ավտոկայանատեղիի մակերես) |
| 7.**Ստորգետնյա հարկերի ընդհանուր մակերես** | 66730.0 մ$^2$ (բնակելի շենքերի ստորին մաս) + 12662 մ$^2$ (ավտոկայանատեղիի մակերես) |
| 8. **Բացօթյա ավտոկայանատեղիների քանակ** | 2200 հատ |
| 9. **Բնակարանների մակերեսը** | 50-85 մ$^2$ |
| 10. **Մասնաշենքերի թիվը** | 60 հատ |
| 11. **Բնակարանների քանակ** | 4509 հատ |

**Օդափոխության և ջեռուցման** ցանցի նախագծումը կատարվել է ըստ ճարտարապետաշինարարական գծագրերի և գործող շինարարական նորմերի և կանոնների՝ ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխություն և օդորակում», ՀՀՇՆ 22-01- 2024 «Շինարարական կլիմայաբանություն» և ՀՀՇՆ II-7.02-95 «Շինարարական ջերմաֆիզիկա»:

Ավտոկայանատեղիների օդափոխման համար նախատեսված են առանձին ներածման և արտածման համակարգեր ամեն հարկի համար: Ըստ նորմատիվների արտածման համակարգի ապահովելու է 2-պատիկ օդափախություն: Ներածումը կկազմի արտածման համակարգի 80%: Ներածումը կատարվում է վերին զոնայից: Արտածումը կատարվում է կեսը վերին զոնայից, կեսը ներքևի: Ավտոկայանատեղի տարածքում կտեղադրվի CO տվիչներ: Այս տվիչները կմիացնեն և կանջատեն օդափոխման համակարգերը: Ավտոկայանատեղի ջեռուցումը կապահովի 5 աստիճան: Ջեռուցումը կկազմակերպվի օդով ջեռուցման ագրեգատներով: Նախատեսված են ծխահեռացման համակարգեր ավտոկայանատեղից և ատրյումից:

Բնակելի շենքերի համար ջերմության հիմնական աղբյուր է ծառայում գազը: Բնակարանների ջեռուցումը կազմակերպված է անհատական կաթսաների կիրառմամբ:

**Գազամատակարարում**. Բնակելի շենքերի գազամատակարարումը կատարվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Գազամատակարարումը իրականացնելու է արտաքին ցանցից:

**Կենցաղային կոյուղու համակարգ**. Կենցաղային կոյուղու ներքին ցանցը իրականացվում է համապատասխան ճարտարապետական հատակագծային լուծումների: Այն նախատեսված է Ø50 և Ø110 մմ տրամագծի խողովակներով, որոնք միացված են Ø110 մմ տրամագծի կանգնակներին: Կանգնակները կայանատեղի առաստաղի տակով կապվում են միմյանց և դրսում միանում համապատասխան դիտահորերին:

**Ջրամատակարարում**. Բնակելի շենքերի ջրամատակարարումը իրականացվելու է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխ.պայմանի համաձայն: Ներքին ջրամատակարման ներքին ցանցը ավտոկայանտեղիից պոմպերի միջոցող ջուրը կանգնակներով մղում է դեպի վերևի հարկեր: Հարկերում ներքին ցանցը իրականացվում է համապատասխան ճարտարապետի կողմից մշակված հատակագծային լուծումների: Իսկ արտաքին ցանցը միանալու է տեխնիկական պայմանով տրված միացման կետին և այնտեղից բերվի դեպի կառույց, որտեղից էլ միանա ներքին ցանցի պոմպերին և հակահրդեհային ջամբարին:

Նախագծային լուծումները ընդունված են համաձայն СНиП 2.04.01-85: Նաձագծման հիմք են ծառայել նաև ՀՀՇՆ 40-01.01-2014 «Ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցեր», ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղու արտաքին ցանցեր և կառուցվածքներ», ՀՀՇՆ 40-01.02-2020 «Ջրամատակարարման արտաքին ցանցեր և կառուցվածքներ» նորմատիվ փաստաթղթերը:

**Հակահրդեհային համակարգ**. Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա: Հակահրդեհային համակարգի համար նախատեսվում է հակահրդեհային ջրամբար և պոմպակայան ավտոկայանատեղիում, որտեղից կանգնակներով ջուրը բարձրանում է դեպի վերևի հարկեր, որտեղ նախատեսվում է հակահրդեհային ծորակներ և պահարաններ:

Շինությունների տարածքում նախատեսվել է հրդեհի ինքնավար հայտնաբերման և ազդարարման համակարգ (ՀԻՀԱՀ)՝ համաձայն ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ II-8.04.02.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա», ՀՀՇՆ IV-11.03-03-02 (ՄՍՆ 2.02-05-2000) «Ավտոկայանատեղեր», ինչպես նաև ՀՀ-ում գործող այլ

շինարարական նորմերի պահանջների: Համակարգի համապատասխան հատվածներն նախատեսվում է ինտեգրել էլեկտրավահանակային ու հեռահաղորդակցության սենյակների ինքնավար հրդեհաշիջման համակարգի հետ: ՀԻՀԱՀ-ը պետք է ունենա օդափոխության և ծխահեռացման համակարգերին ինտեգրման հնարավորություն:

Ավտոկայանատեղիներում նախատեսվել են տեղային (անհատական) գործարկմամբ փոշիային հրդեհաշիջման մոդուլներ: Իսկ էլեկտրավահանակային և հեռահաղորդացության սենյակներում կիրառվելու է կենտրոնացված գործարկմամբ գազային հրդեհաշիջման համակարգ:

**Էլեկտրամատակարարում**. Բնակելի շենքերի էլեկտրամատակարարումը նախատեսվում է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Ներքին լուսավորությունն իրականացվում է համաձայն ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում», ինչպես նաև ՀՀ-ում գործող այլ շինարարական նորմերի պահանջների: Լուսավորության ցանցն իր մեջ պետք է ներառի միմյանցից անկախ սնվող և գործող աշխատանքային և տարահանման–վթարային լուսավորության ցանցեր: Ներքին լուսավորության ցանցի նախագծման համար նախատեսված են լուսադիոդային լուսատուներ: Վերջինների ընտրության ժամանակ հաշվի են առնվել ՀՆ N 2.2.4-008-06 «Աշխատատեղերում ինֆրաձայնի հիգիենիկ նորմերը», ՀՆ N 2.2.4-010-06 «Աշխատատեղերում ուլտրաձայնի հիգիենիկ նորմերը» և ՀՀ կառավարության 2021թ.-ի հունվարի 21-ի N 77 որոշումը:

Էներգախնայողության բարձրացման նպատակով սենքերում լուսավորության ցանցն իրականացվելու է առանձին խմբերով, իսկ աստիճանավանդակներում և ստորգետնյա ավտոկայանատեղիներում՝ շարժման տվիչներով:

Ներքին էլեկտրամատակարարման ցանցում նախատեսվելու են վարդակային ցանցեր՝ աշխատանքային և կենցաղային սարքերի սնուցման համար: Առանձին խմբով սնուցումներ են նախատեսվում հրդեհների հայտնբերման և ազդարարման, տեսահսկման և ձայնագրման համակարգի և ինտերնետային ցանցի սնուցման համար:

Ներքին էլեկտրամատակարարման և լուսավորության ցանցերն իրականացվելու են եռաջիղ հաղորդալարերով /մալուխներով/՝ երրորդ ջիղն օգտագործելով հողանցման համար: Լարանցումը փակ է, կախովի առաստաղների հատվածում՝ ծալքախողովակների մեջ:

Ներքին էլեկտրամատակարարման և լուսավորության ցանցերի սնուցման համար հարկերում նախատեսել հարկային լուսավորության վահաններ՝ նվազագույնը մեկ հատ յուրաքանչյուր հարկում:

**Ուժային և հողանցման ցանց**. Նախագծով վախատեսվել են առանձին ուժային մալուխներ վերելակի, օդափոխության համակարգերի և հարկային

լուսավորության վահանների էլեկտրամատակարարման համար: Էլ. վահանակային սենյակից ուժային մալուխների խմբային անցկացումն իրականացվում է հատուկ դրա համար նախատեսված հորանի միջով: Շինության հարակից տարածքում նախատեսվել է հողանցման կոնտուր՝ կրկնակի հողանցման համակարգի համար:

**Տեսահսկման և ձայնագրման համակարգ**. Նախատեսվում է ավտոկայանատեղի, միջանցքների, շինության արտաքին տարածքի, գլխավոր և օժանդակ մուտքերի տեսաձայնագրում, իրական ժամանակում առցանց տեսահսկման հնարավորությամբ, ինչպես նաև HD որակի տեսախցիկներ՝ գիշերային տեսաձայնագրման հնարավորությամբ:

**Ինտերնետային ցանց**. Բազմաֆունկցիոնալ համալիրում նախատեսվել է ինտերնետային ցանց: Հեռահաղորդակցության (սերվերային) սենյակում տեղադրվելու է գլխավոր կոմուտատոր սարք, իսկ հարկերում հարկային կոմուտատոր սարք՝ տվյալ հարկում միացվող ցանցային սարքերի քանակին համապատասխան մուտքերով: Հարկերի միջանցքներում և աշխատասենյակներում տեղադրվելու են անլար ցանցի սարքրեր (Wi-Fi):

**Ջրահեռացում**. Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսված է կազմակերպված եղանակով, հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղ պարզեցվելուց, զտվելուց հետո անձրևաջրերը կհեռացվեն տարածքից՝ համաձայն տեխնիկական պայմանի: Նույն ցանցով և կհեռացվի շենքերի տանիքներից հավաքվող անձրևաջրերը և օդափոխության, օդորակման սարքավորումներից առաջացած կոնդենսատները:

**Ոռոգման համակարգ**. Շենքերի կանաչ տարածքների ոռոգումը նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն: Տարածքը նախատեսվում է ոռոգել ցնցուղային սարքավորումներով, որոնք միմյանց հետ կապվում են ստորգետնյա պոլիէթիլենային խողովակներով:

**Աղբահեռացում**. Շենքերի աղբահեռացումը կիրականացվի անհատական յուրաքանչյուր բնակչի կողմից: Աղբամանները կտեղադրվեն շենքերի հարակից տարածքներում:

## 6.2 **Շինարարության փուլ**

Բազմաբնակարան շենքերի կառուցումը կատարվելու է երեք փուլերով.

- Նախապատրաստական աշխատանքներ
- Առաջին փուլում կառուցվելու են ստորգետնյա ավտոկայանատեղիները:
- Երկրորդ փուլում բնակելի շենքերի կառուցումը:

### 6.2.1. **Ժամանակացույց**

Շինարարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է ըստ գործող ՀՀՇՆ 1-3.01.-2008 նորմերի: Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 6 տարի՝ 72 ամիս:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է՝

- շինարարական հրապարակի կազմակերպում,
- հողային աշխատանքներ՝ հանույթ, լիցք
- շին-մոնտաժային աշխատանքների իրականացում
- հիմքերի իրականացում, ստորգետնյա հարկերի, հորաների կառուցում,
- ե/բ սալիաշխատանքներ, պատերի շարվածքներ,
- ենթակառուցվածքների անցկացում,
- հարդարման աշխատանքների իրականացում և այլն:

### 6.2.2 **Շին. հրապարակի կազմակերպում**

Շինարարական հրապարակի տեղամասում, որտեղ տարվում են հողային քանդման աշխատանքներ չի թույլատրվում կատարել այլ աշխատանքներ և կողմնակի մարդկանց ներկայությունը արգելվում է:

Բաց տեղերում քամու 15մ/վ արագության դեպքում, սառցակալած և մառախուղի ժամանակ հողային քանդման աշխատանքները նախատեսվում է դադարեցնել:

Ինժեներական կոմունիկացիաների խրամատների քանդման աշխատանքների ժամանակ հողային կուտակված զանգվածների վրայով մարդկանց տեղաշարժն արգելվում է:

Խրամատները պատրաստելիս հոսուն գրունտների ի հայտ գալու դեպքում տվյալ հատվածքներում նախատեսվում է իրականացնել խրամատների շուրթերը ամրացնելու միջոցառումներ, ապահովելով աշխատանքների անվտանգությունը:

Ճանապարհների անցումային հատվածներում ինժեներական կոմունիկացիաների խրամատները պատրաստելիս նախատեսվում է խրամատներում տեղադրել ինժեներական գծերին համապատասխան քանակով, ոչ պակաս 1/3 տրամագծով ինժեներական գծին գերազանցող մետաղական կամ համապատասխան ամրության պլաստիկե խողովակներ, որոնց եզրային հատվածքները պետք է ծածկել խցանով օտար մարմինների թափանցումից խուսափելու համար և համապատասախան ավազային բարձիկը ապահովվելով կատարել գրունտի ետլիցք տոփանումներով:

Տեղամասում հողային զանգավծների երկարաժամկետ կուտակումների դեպքում, ինչպես նաև պահոց տեղափոխված հողային զանգվածները անհրաժեշտ է ծածկել պաստառով քամու ազդեցությամբ փոշետիպ մասնիկների տարածումը բացառելու համար:

Շինարարության ընթացքում շինմոնտաժային աշխատանքները

կատարելիս նախապես անհրաժեշտ են ապամոնտաժված կոնստրուկցիաներին առնչվող հանգույցները ենթարկել համապատասխան մշակման՝ նոր մոնտաժային և կառուցման աշխատանքների կատարման համար:

Շինարարության կատարման ժամանակ անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության միջոցառումներ.

- աշխատանքների տեղադրությունը ըստ բարձրության 1.3 մետր և ավելի տարբերությունների դեպքում, բարձր տեղադրված կոնստրուկցիաների, նյութերի, գործիքների անկումից, մեքենաների շարժական մասերի և նրանցով տեղաշարժվող կոնստրուկցիաների և նյութերի անկումից, շենքի և շինության չամրացված կոնստրուկցիաների փլուզումից, մեքենաների մասերի անկումից,
- աշխատանքի ժամանակ վնասակար նյութերով աշխատելիս անվտանգության ապահովում,
- աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի և կոնստրուկցիաների աշխատատեղերում ճիշտ դասավորություն,
- աշխատանքների կատարման հերթականությունը հաշվի առնելով կոնստրուկցիաների կայուն տեղադրման համար,
- կոնստրուկցիաների և շինվածքների տեղադրման ժամանակ ապահովել միջոցառումներ աշխատողների ցած չընկնելու և նրանց կողմից իրերի ընկնելու վտանգի դեմ համապատասխան պաշտպանիչ միջոցառումներ իրականացնելու,
- ճշգրտել աշխատանքային վտանգավոր գոտին նշահարել դրոշակներով, ցուցանակներով և այլ միջոցառումներով,
- ապահովել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա,
- մոնտաժման ընթացքում ապահովել կոնստրուկցիաների և շինվածքների կայունությունը:

Շինարարական հրապարակում կազմակերպվելու է գրասենյակային հատվածամաս, որտեղ նախատեսված է հանդերձարան-չորանոց, սննդի ընդունման կետ, լվացարան, ցնցուղարան, բուժկետ:

Շինհրապարակում տեղակայվելու են.

- ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման, տեղակայման վայրեր,
- շինարարական նյութերի և գործիքների պահեստավորման և մշակման երկու կետ,
- պահակակետ,
- բետոնի պատրաստման հանգույց,
- բետոնի բաղադրությունը ստուգելու լաբորատորիա,
- անիվերի լվացման հարթակ և ջրամատակարարման պոմպ,
- կենցաղային աղբամաններ (1x1.5 չափերի),
- բիոուգարաններ:

Ապրանքային բետոնը պատրաստվելու է շինարարական հրապարակում,

տեղադրվելու է շարժական ժամանակակից հագեցվածություն ունեցող բետոնահանգույց:

Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին:

Շինարարական հրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ՝ 2 լյուքսից ոչ պակաս:

Հրապարակը ցանկապատվելու է մետաղական ժամանակավոր պարսպով՝ դարպասով: Պարսպի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ:

Շինարարական աշխատանքներին մասնակցելու են ընդհանուր 2700 հոգի, որից 120 հոգին՝տեխնիկայի շահագործման վրա աշխատող անձնակազմը, 50 հոգին՝ ինժեներատեխնիկական անձնակազմ, անվտանգության տեսուչներ, սպասարկող անձնակազմ: Միաժամանակյա աշխատողների քանակը լինելու է 1260 հոգի:

Նախատեսվող գործունեության տարածքում նախատեսվում է շուրջ 350000 – 450000 մ$^3$ հանույթ, որից 62000 մ$^3$ հողային բուսական շերտը կառանձնացվի և կպահպանվի հետագայում բարեկարգման նպատակով օգտագործման համար, իսկ մնացած ծավալը տարածքի վերտիկալ նախագծմամբ նախատեսվում է կիրառել տարածքի համահարթեցման նպատակով: Հողաբուսական շերտի պահպանությունն իրականացվելու է ՀՀ կառավարության N 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը նախատեսվում է 72 ամիս:

**Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ**. Նախատեսվող գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- աշտարակավոր կռունկներ – 39 հատ,
- անվավոր կռունկներ – 26 հատ,
- բետոնախառնիչներ – 15 հատ,
- բետոնամղիչ մեքենաներ (37-62մ) - 3 հատ,
- ստացիոնար բետոնամղիչներ – 5 հատ,
- բեռնատար ինքնաթափեր – 15 հատ,
- էքսկավատորներ (10-35տ բեռնատարողությամբ) - 10հատ,
- բեռնիչներ - 5 հատ,
- էքսկավատոր-ամբարձիչներ (բոբկատ) – 15 հատ:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է

համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Առասանման եղանակները և ձևերը որոշվում են նախապես և առասանման գրաֆիկական նկարագրությունը տրվում է առասանիչ բանվորներին, մեքենավարներին, կամ կախվում են տեսանելի տեղում ամբարձիչի մոտակայքում:

Ամբարձիչի պտտվող պլատֆորմի և տրանսպորտային միջոցի կամ կառույցի կողային մասի մինիմալ հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս քան 1մ:

Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկան կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ արտադրական հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

### 6.3 **Բարեկարգում և կանաչապատում**

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում, որը կկազմի կառուցապատվող մակերեսի 41-42%-ը: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի հիման վրա՝ Կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշմանը համապատասխան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքում նախատեսվում է իրականացնել մեծածավալ բարեկարգման աշխատանքներ, որտեղ նախատեսվող կանաչապատումն ունի 3 հիմնական բաղադրիչ:

1. Բարեկարգում ներբակային հատվածում, որտեղ կլինեն խոտածածկույթ և դեկորատիվ բուսականություն (ակացիա, փռվող գիհի և ոսկեգույն թույա):
2. Ճանապարհամերձ հատվածների բարեկարգում, որտեղ կլինեն խոտածածկույթ և թփային տրամաբանությամբ կանաչապատում (գնդաձև թույա սիզամարգ և ակացիա):
3. Այգիներ, որոնց մակերեսը կկազմի շուրջ – 40000.0 քմ, և վերջիններս բաղկացած կլինեն շուրջ 2800 տարբեր բնույթի ծառատեսակներից (թխկի, հացենի և եղևնիներ):

Նախքան ծառատնկման աշխատանքները կանաչապատվող տարածքում կատարվելու են ագրոմելիորատիվ միջոցառումներ՝ ոռոգման ցանցի անցկացում, ծառաթփուտային տեսակների տնկման վայրերի տեղորոշում և նշահարում, տնկափոսերի նախապատրաստում, հողախառնուրդի նախապատրաստում և կուտակում տնկափոսերի մոտ: Տարածքի կանաչապատման համար օգտագործվելու է հողային աշխատանքների արդյունքում հանված շուրջ 62000 $մ^3$ հողաբուսական շերտը, որի հանումն և պահպանությունն իրականացվելու է ՀՀ կառավարության N 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Ծառատունկը նախատեսվում է իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութի ընտրությունը և ձեռք բերումը կատարվելու է ՀՀ կառավարության 15.02.2024թ.-ի №226-Ն որոշման պահանջներին համապատասխան, կանաչապատման ընթացքում կիրառվելու է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հավաստագրված տնկանյութ:

Կանաչապատ տարածքի ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է $0.006մ^3/մ^2$:

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝ $W = (n_б \times S) \times K \times t$

որտեղ՝

S – ոռոգվող տարածքի մակերեսն է, $S = 106227մ^2$ ,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, K = 1

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$W = (0.006 \times 106227) \times 1 \times 175 = 111538մ^3$ /տարի

## 7. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

Բնակելի շենքերի կառուցման շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

### 7.1 Ջրօգտագործում

Նախագծվող բազմաֆունկցիոնալ բնակելի թաղամասի շինարարության ընթացքում աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի

ջրցանի, գրունտի խոնավացման և հրդեհաշիջման համար (անհրաժեշտության դեպքում) նախատեսվում է օգտագործել ջուր:

Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով, պահեստավորվելու է շինարարական հրապարակում տեղադրվող տարողությունների մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Տեխնիկական ջրի մատակարարումը կատարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Խմելու ջրի մատակարարումը իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից:

Շինարարական աշխատանքներին ներգարվված անձնակազմի կենցաղային և տնտեսական նպատակներով անհաժեշտ ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով :

W= (n x N + n1 x N1) x T = 68547մ$^3$ կամ 31.3մ$^3$/օր

որտեղ՝

n - ԻՏ և գրասենյակային աշխատողների թիվն է, 50

N - ԻՏԱ ջրածախսի նորման՝ 0.016մ$^3$,

n1 - բանվորների թիվն է, 1220

N1 - ջրածախսի նորման՝ 0.025մ$^3$/մարդ

T - աշխատանքային օրերի թիվն է, 2190

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կազմելու է մոտ 75մ$^3$/օր: Տեխնիկական ջրի շուրջ 3.5մ$^3$/օր քանակ կպահանջվի մեքենաների անիվների լվացման համար (1 մեքենայի անիվների լվացման համար նախատեսվում է 0.14մ$^3$ ջուր):

**Կեղտաջրեր**. Աշխատողների համար նախատեսվում է տեղադրել բիոզուգարան՝ լվացարանով: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Իսկ ավտոբետոնախառնիչի տակարի, ավտբետոնամղիչի խողովակի լվացման համար տեղադրվելու է ժամանակավոր պարզարան 1մ$^3$ տարողունակությամբ:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի: Հրդեհամարման համար նախատեսվող ջրաքանակը հաշվարկվում է 0,12լ/վրկ 1մ$^2$ մակերեսի համար:

## 7.2 Շինարարական նյութեր

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- Երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- Ավազ շինարարական շաղախների համար

- Բետոն
- Ցեմենտ
- Արտաքին հարդարման համար օգտագործվող հրաբխային ծագման քարեր՝ տուֆ, բազալտ
- էլեկտրոդներ
- Մետաղ, մետաղական կառուցվածքներ, ամրանային ձողեր
- Շինարարական շաղախ
- Տարատեսակ ներկանյութեր
- Ապակի, երեսապատման սալիկներ:

Շինհրապարակում նախատեսվում է բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը ձեռք են բերվելու ռուսական և իրանական արտադրողներից, ինչպես նաև ներմուծվելու են սեփական միջոցներով:

Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

## 8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ

### 8.1 Օդային ավազան

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում՝ ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

**Մթնոլորտ արտանտվող նյութերի հաշվարկ**

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը գրունտային ճանապարհով ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվադողերի և գրունտային մակերեսի շփման արդյունքում, գրունտի, շինանյութերի, շինարարական աղբի տեղափոխման, դատարկման աշխատանքների ժամանակ: Շինհրապարակում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով

$$Q=\frac{C_1 x C_2 x C_3 x K_5 x N x L x C_7 x q_1}{3600} + C_4 x C_5 x K_5 x q_1{}^2 x S x n,\ գ/վրկ$$

$$M_{տարի}=0.0864*M_{վրկ}*(365-(Тсп+Тд)),\ տ/տարի$$

Որտեղ,

$C_1$ – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռնունակությունը

$C_2$ - գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը

$C_3$ - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը

$K_5$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

N- ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում

L- մի վազքի միջին երկարությունն է

$C_7$ - գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը

$q_1$ -1կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ

$C_4$ - գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը

$C_5$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը

$K_5$ - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

$q_1{}^2$ - նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները

S- պլատֆորմայի միջին մակերեսն է ,

n- ավտոմեքենաների թիվն է

Тсп – ձնածածկ օրերի թիվն է

Тд – անձրևային օրերի թիվն է

| Կատարվող աշխատանքի բնույթը | 1 | C2 | 3 | | | C7 | q1 | 4 | C5 | 5 | q12 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մեքենաների շարժը | 1 | 0.6 | 0.1 | 2 | 0,2 | 0,01 | 1025 | 1,3 | 1.0 | 0,01 | 0,002 | |
| Գրունտի հանույթը | 1 | 0.6 | 0.1 | 2 | 0,2 | 0,01 | 1025 | 1,3 | 1.0 | 0,01 | 0.002 | |
| Գրունտի հետլիցք | 1 | 0.6 | 0.1 | 2 | 0,2 | 0,01 | 1025 | 1,3 | 1.0 | 0,01 | 0.002 | |

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է ստորև աղյուսակում:

| Աշխատանքի բնույթը | M, տ/տարի | Q, գ/վրկ |
|---|---|---|
| Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO2) | 0,037 | 0.005 |
| Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO2) | 0,0013 | 0,00018 |
| Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO2) | 0,0013 | 0,00018 |
| Արտանետվող փոշու ընդհանուր քանակը | 0,0396 | 0,00536 |

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է անօրգանական փոշի՝ 20-70% $SiO_2$ պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային տվյալների համաձայն գրունտի հանույթի համար օգտագործվելու է 1 էքսկավատոր՝ համապատասխանաբար 1մ³ աշխատանքային շերեփի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times P6 \times B1 \times G \times 10^6}{3600} \text{ գ/վրկ}$$

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04

P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2

P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B1 - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերեփի տարողության՝ 9տ/ժ

Այսպիսով,

$$Q = \frac{0{,}04 \times 0{,}02 \times 1{,}2 \times 0{,}01 \times 0{,}5 \times 1 \times 0{,}5 \times 4{,}5 \times 10^6}{3600} = 0{,}003 \text{ գ/վրկ}$$

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% $SiO_2$).

M=0,0036 x 0,003 x 72 = 0,00078տ/շինժամ

Բեռնման – բեռնաթափման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող փոշու հաշվարկն իրականացվել է գործող մեթոդակարգի համաձայն: Թափքի բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ուղղահայաց՝ առանց թեքի կիրառման: Բեռնաթափվում է գրունտ, ինչից առաջացող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M = \frac{K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K7 \times K_8 \times K_9 \times B \times G \times 10^6}{3600} \cdot (1-\eta), \text{ գ/վրկ}$$

K1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,

K2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,

K3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը,

K4 – գործակից, որը հաշվի է առնում տեղի պայմանները, տեղափոխման և փոշեառաջացման պայմանները,

K5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը,

K7 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը,

K8 – ուղղման գործակից տարբեր նյութերի համար՝ կախված ճանկաշերեփի տեսակից

K9 – ավտոինքնաթափի համախառն բեռնաթափման ուղղման գործակից

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,

G – նյութի վերամշակման գումարային քանակը 1 ժամվա հաշվով, տ/ժ

η - փոշենստեցման արդյունավետության հարաբերակցույթունը մեկ միավորի հաշվով

***Արտանետվող փոշու տարեկան քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.***

$M_{տ} = K1 \cdot K2 \cdot K3 \cdot K4 \cdot K5 \cdot K7 \cdot K8 \cdot K9 \cdot B \cdot G_{տ}$, *տ/տ*

որտեղ *Gտ* – վերամշակվող նյութի գումարային ծավալն է շինարարության ողջ ժամանակատվածի համար

Գրունտ

$M = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,2 \cdot 0.21 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 *0,15= 0,000945$ գ/վրկ

$M_{տ} = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,5 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 422 = 0,0076$ տ/տարի

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի բնութագիրը բեռնման – բեռնաթափման աշխատանքներից

| Արտանետվող նյութ | Առավելագույն միանվագ, գ/վրկ | Տարեկան արտանետում տ/տ |
|---|---|---|
| Անօրգանական փոշի >70% | 0,000945 | 0,0076 |
| Անօրգանական փոշի 20-70% | 0,003 | 0,0106 |

Շինարարության ժամանակ աշխատող դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M' = \frac{G_4 * q_i * n * 10^3}{3600}$$

Որտեղ, $G_4$ – դիզ. վառելիքի ժամային ծախսն է

$q_i$ – i-րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/կ

n – շինհրապարակում միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:

Հետևաբար,

$$M' = \frac{G_4 * q_i * n * 10^3}{3600} = 0.026*0.084*3*10^3/3600=0,0018մ^3$$

գազային արտանետման ծավալն է:

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$Gi = \sum_{k=1} (m_{ՍԹՍi} \cdot t_{ՍԹՍ} + 1,3 \cdot m_{ՍԹՍik} \cdot t_{ՍԹՍk}) \cdot N_k / 1800, г/с$$

որտեղ mՍԹՍi – i-րդ նյութի սահմանային արտանետումն է չծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$1,3 \cdot m_{ՄԹUik}$ - i-րդ նյութի սահմանային արտանետումն է ծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$t_{ՄԹU}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ չծանրաբեռնված ր.

$t_{ՄԹUk}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ ծանրաբեռնված ր.

$N_k$ – k-րդ խմբի մեքենաների և միաժամանակ աշխատող մեքենանների առավելագույն թիվն է

i-րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$M_i = \sum( m_{ՄԹUi} \cdot t_{ՄԹU} + 1,3 \cdot m_{ՄԹUik} \cdot t_{ՄԹUk}) \cdot 10^{-6}$, տ/տարի

k=1

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում: Շինարարության ընթացքում օդի դրական ջերմաստիճանի դեպքում կատարվելու են շինհրապարակի և ճանապահների փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով, համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմերի՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս:

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ:

## 8.2 Հողային ռեսուրսներ

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են Նոր Հաճն համայնքի Քանաքեռավան գյուղի «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ սեփականություն հանդիսացող 25.29221հա ընդհանուր մակերեսով 07-064-0353-0503, 07-064-0419-0001 և 07-064-0384-0006 կադաստրային ծածկագրերով հողամասերի վրա: Կառուցապատման նպատակով հայցվող տարածքի բնական հողային ծածկույթը ներկայացված է բաց- շագանակագույն հողերով:

Հողա–բուսական ծածկույթը ունի շատ փոքր հզորություն 0.1-0.2 մետր, սահմանափակ տարածում (դիտվում է միայն տեղամասի հարավ–արևելյան և հյուսիս արևմտյան մասերում, առկա այգիների հատվածում), հիմնականում կավավազային կազմի է, քիչ խճի և մանրախճի պարունակությամբ:

Բնական հողային ծածկույթի վրա ազդեցություն չի նախատեսվում, քանի որ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը հողային շերտի 0.5մ

հզորությամբ հեռացվելու է շինարարական հրապարակի տարածքից, կուտակվելու է հատուկ հատկացված վայրում, այնուհետրև օգտագործվելու է կանաչապատման աշխատանքների ժամանակ: Հողային շերտի պահպանության միջոցառումները նկարագրված են բնապահպանական կառավարման պլանում:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցություն չի նախատեսվում:

## 8.3 **Ջրային ռեսուրսներ**

Կառուցապատման նպատակով հայցվող տարածքում չկան մակերևութային ջրային ռեսուրսներ: Մոտակա ջրային ռեսուրսը Հրազդան գետն է, որի հունը գտնվում է հայցվող տարածքից մոտ 1.7կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքում ստորգետնյա ջրերի հորիզոններ չկան, տարածքի արմատական ապարները ջրակալված չեն: Դա պայմանավորված է տեղամասի երկրաձևաբանական առանձնահատկություններով: Հայցվող տարածքը հարավից, հարավ-արևելքից և արևմուտքից սահմանափակվում է ձորակներով, որոնք հանդիսանում են գրունտային ջրերի և մթնոլորտային տեղումների բեռնաթափման բնական ուղիներ: Հետևաբար, ջրային ռեսուրսների վրա ազդեցություններ չեն կանխատեսվում:

## 8.4 **Կենսաբազմազանություն**

Կառուցապատման նպատակով հայցվող տարածքը երկար տարիներ օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով, ինչի արդյունքում բնական («առաջնային») բուսածածկը խախտված է, կենդանական աշխարհի տեսական կազմը և քանակությունը՝ խիստ փոփոխված: Բուսածածկը ներկայացված է ՀՀ տարածքում լայն զարգացած տափաստանային տարախոտային համակեցություններով, նշվել են առանձին աճող մասրենու, մոշենու և պլոճենու թփեր: Անտառածածկ հատվածներ կառուցապավելիք տարածքում չկան: Հետևաբար, կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունները կորւմ են խիստ սահմանափակ և կարճաժամկետ բնույթ:

Թեև նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, Բնապահպանական միջոցառումների մոնիտորինգի պլանով նախատեսվում են համապատասխան միջոցառումներ կենսաբազմազանության պահպանության նպատակով:

ՀՀ Կոտայքի մարզ Նոր Հաճն համայնքի, այդ թվում՝ Քանաքեռավան բնակավայրի սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Հետևաբար, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցություններ չեն կանխատեսվում:

## 8.5 **Թափոնների առաջացում և կառավարում**

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ, որոնց վտանգավորության դասը ներկայացվում է ստորև Աղյուսակ 8-ում:

*Աղյուսակ 8. Թափոնների տեսակները ըստ վտանգավորության դասի*

| Թափոնի անվանում | Ծածկագիր | Վտանգավորության Դաս | Քանակ |
|---|---|---|---|
| Կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) | 91200400 01 00 4 | IV | մոտ 10.8տ |
| Շինարարական աղբ | 91200601 01 00 4 | IV | 2000 մ³ |
| Յուղոտված լաթեր | 58200600 01 01 4 | IV | 5կգ |
| Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը - 15%-ից ցածր) | 31402303 01 03 4 | IV | 95 մ³ |
| Եռակցման խարամ | 3140480001994 | IV | - |

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 և 5-րդ դասերին:

Շինաղբի, չաղտոտված հողային զանգվածի տեղափոխման վայրը, ինչպես նաև վերը նշված թափոնների տեղափոխման վայրը կճշտվի Նոր Հաճընի համայնքապետարանի հետ՝ շին. թույլտվության փուլում:

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

M=n*m

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է.

M=1260*120= 151200կգ/տ

Շինարարությունը տևելու է 6 տարի, հետևաբար

M=151200*6= 907200 կգ/տ ողջ շինարարության ընթացքում:

Վտանգավոր թափոնների գործածությունը ՀՀ-ում պատկանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներին՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ուստի այդպիսի թափոնների գործածության տեսակների գործունեությունը կիրականացվի համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

## 8.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Հողային աշխատանքների ընթացքում պատահական գտածոյի (շարժական կամ անշարժ) անսպասելի հայտնաբերման դեպքում, համաձայն ՀՀ «Պատմության և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի (1998թ.) և ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ

մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան պատմամշակութային և բնության հուշարձաններ, ուստի դրանց վրա ազդեցություն չի կանխատեսվում:

## 8.7 **Աղմուկ և թրթռում**

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլդոնը: Միաժամանակ այս երկու շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրներն էլ կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ Laէկվ, կազմում է 85 դԲ: Գլդոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝≤ 200կգ/մ2: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

Iաղ = 23 lg mէ – 10 դԲ, երբ m ≥ 200 կգ/մ2

Iաղ = 13 lg mէ – 13 դԲ, երբ m ≤ 200 կգ/մ2

Որտեղ m = Km – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ2,

K –գործակից է , որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը

200կգ/մ2 K=1,3

M = 1,3 x 200=260

Լաղ = 13lg mէ -13 = 18,2 դԲ

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

LAտար = LAէկվ - Լաղ = 85– 18,2 = 66,8 դԲ

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը RԱտր ըստ աղուսյակ 2 ՝ կազմում է միջինը 50 դԲ:

LAտար = 66,8 – 50 = 16,8 դԲ

Գլդոնի համար՝

LAտար = LAէկվ - Լաղ = 80– 18,2 -50 = 11,8 դԲ

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլդոնի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

**Թրթռում**

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ Առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակներ.

| Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց | Թույլատրելի արժեքները X0, Y0 և Z0 առանցքներով | | | |
|---|---|---|---|---|
| | Թրթռա արագացում | | Թրթռա արագություն | |
| | մ/վրկ2 .10-3 | դԲ | մ/վ .10-3 | դԲ |
| 2 | 10,0 | 80 | 0,79 | 84 |
| 4 | 11,0 | 81 | 0,45 | 79 |
| 8 | 14,0 | 83 | 0,28 | 75 |
| 16 | 28,0 | 89 | 0,28 | 75 |
| 31,5 | 56,0 | 95 | 0,28 | 75 |
| 63 | 110,0 | 101 | 0,28 | 75 |
| Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները | 10 | 80 | 0,28 | 75 |
| Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ: | | | | |

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են ԲԿՊ-ում: Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ իրականացնել միայն բողոքների դեպքում:

## 8.8 Արտակարգ իրավիճակներ

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում կապված՝

- բնական աղետների,
- սողանքների, հրդեհների,
- հեղուկ նյութերի արտահոսքի
- շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների ռիսկը կապված է բնակելի շենքերում հրդեհների, բնական աղետների հետ:

## 8.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Հնարավոր ազդեցություններից խուսափելու համար շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-480* նորմերի:

Շահագործման փուլում մարդկանց առողջության վրա բացասական ազդեցություն չի ունենալու, այլ միայն դրական ազդեցություն, քանի որ ապահովվելու է մարդկանց բնակարանային կարիքները:

8.10 **Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն**

Բնակելի շենքերի նախագծային լուծումները կատարվել են՝ ՀՀ կառավարության 12.04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան, ներառելով՝ ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը:

Բնակելի շենքերի էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Է և (կամ) Ձ1 ընթացակարգերի պահանջները:

Համաձայն նույն որոշման IX բաժնի 31 կետի՝ շենքերը շահագործման հանձնելուց կամ շուկա հանելուց առաջ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգով սահմանված էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Նույն բաժնի 34 կետում միաժամանակ նշվում է՝ էներգաարդյունավետության սերտիֆիկատը տրամադրվում է էներգետիկ փորձաքննության (աուդիտ) հիման վրա, որը ներառում է էներգաարդյունավետությունն օպտիմալ կերպով բարելավելու վերաբերյալ առաջարկություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ գործող էներգաարդյունավետության պահանջների համեմատությամբ այդ բարելավումը նպատակահարմար չէ:

Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

Բնակելի շենքերի էներգաարդյունավետության և էներգախնայողության ապահովման նպատակով շենքերը կկառուցվեն.

- շենքի արտաքին պատերը երեսապատվելու են սրբատաշ տրավերտինե սալիկներով, պահպանելով հրակայուն և անջրաթափանց, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերի նորմերը,
- կատարվելու է դեկորատիվ սալիկապատում՝ ջերմամեկուսիչ շերտի ընտրությամբ, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից,
- շենքերի միջտարածքային և բնակիչների կողմից օգտագործվող ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով,
- լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով:

Բնակելի շենքերը, ներառյալ ստորգետնյա հարկերը (թաքստոց)

կահավորելիս առաջնորդվելու են ՀՀ կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշմամբ սահմանված պահանջներով,

- արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով,
- էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտածման համակարգերով,
- ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով:

8.11 **Սոցիալական հարցեր**

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,
- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,
- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

Բնակելի շենքերի կառուցումը նպաստելու է բնակչության բնակարանով ապահովվածությանը, բնակարանային կարիքների բավարարմանը:

# 9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## 9.1. Շրջակա միջավայրի պահպանություն և մեղմացնող միջոցառումները

Ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին, ինչպես նաև ԱԶԲ բնապահպանական անվտանգության սկզբունքներին նախատեսվում է ապահովել բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) միջոցով: ԲԿՊ-ում պարունակում է Ծրագրի բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն և շահագործում) հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներն, ինչպես նաև մոնիտորինգի գործողությունները՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Ծրագրի համար մշակված ԲԿՊ՝ մեղմացնող միջացառումները և մոնիտորինգի պլանն, ամբողջական ներկայացված են Հավելված 4-ում և Հավելված 5-ում:

ԲԿՊ-ն որպես անբաժանելի մաս կցվելու է հիմնական շինարար կապալառուի մրցութային և պայմանագրային փաստաթղթերին: Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ի իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

Ստորև ամփոփ բերվում են նախատեսվող գործունեությունից ակնկալվող ազդեցությունները և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հիմնական բնապահպանական, ինչպես նաև աշխատանքի և առողջության ապահովման միջոցառումները, որոնք պատշաճ ձևով կիրականացվեն ենթածրագրի իրականացման բոլոր փուլերի ընթացքում.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,
- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում,
- շինարական աղբի կանանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շին. հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարնեից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտոկա հանգույցներից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահումը կիրականացվի բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկումը կիրականացվի մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումներ,
- առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում,
- տարածքի կանաչապատ գոտիների համալրում արժեքավոր բուսականությամբ:

Շենքերի կառուցման աշխատանքների ընթացքում փոշու արտանետումների շինարարական հրապարակից դուրս տարածվելը կանխարգելելու նպատակով նախատեսվում է

- ցանկապատել շինարարական հրապարակը, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ,

- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ,
- ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,
- շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայր և հատուկ սահմանված երթուղով:

Նախատեսվող գործունեության տարածքում արգելվում է նաև այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները:

Վտանգավոր թափոնների գործածությունը ՀՀ-ում պատկանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներին՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի, ուստի այդպիսի թափոնների գործածության տեսակների գործունեությունը կիրականացվի համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

### 9.2. **Մոնիտորինգ**

Նախատեսվող գործունեության ամբողջ ընթացքում կանոնավոր մոնիտորինգ է իրականացվելու ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով:

Տեխնիկական վերահսկողության շրջանակներում կիրականացվի ամենօրյա հսկողություն, որը կներառի նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը և հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ ժամանակին կտեղեկացվի նախատեսվող գործունեություն ձեռնարկողին:

Ծախսերի արդյունավետության տեսանկյունից նպատակահարմար է համարվել փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակների չափագրումներն իրականացնել ազդակիր կողմերի համապատասխան բողոքների դեպքերում:

## 10. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Բնապահպանական պետական փորձաքննության շրջանակում 2024 թվականի նոյեմբերի 12-ին, ժամը՝ 15:00-ին, Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում

իրականացվել է բազմաֆունկցիոնալ բնակելի թաղամասի կառուցման նախագծի և նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում:

Հանդիպմանը մասնակցել են Նոր Հաճըն համայնքի համայնքապետարանի ներկայացուցիչներ, ներկայացուցիչներ պատվիրատու և նախագծային կազմակերպություններից և այլք:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 21 աշխատանքային օր առաջ հանդիպման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «Առավոտ» օրաթերթի 15.10.2024 համարում:

Շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները Նոր Հաճընի համայնքապետարան ուղարկել նաև գրավոր:

Հանդիպման արձանագրությունը, մասնակիցների ցուցակը, համայքի ավագանու համաձայնությունը նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ ներկայացվում են հաշվետվության հավելված 7-ում, իսկ հանրային քննարկման տեսաձայնագրությունը ներկայացվում է հաշվետվությանը կից:

# ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Կադաստրի կոմիտե

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է 5 փետրվարի 2025 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Նոր Հաճն գյուղ Քանաքեռավան

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրեր 25.04.2024թ. թիվ 7250, թիվ 7252,
Համաձայնագեր 18.07.2024թ. 6173, թիվ 6171

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-064-0353-0503
Մակերեսի չափը (հա)՝ 10.92954
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Վարելահող
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 05022025-07-0145, գաղտնաբառ՝ THUG7P8BSVF**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

էջ 1/2

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՍՈՒՍԱՆՆԱ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 05022025-07-0145, գաղտնաբառ՝ TIIUG7P8BSVF**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 2 մայիսի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Նոր Հաճն գյուղ Քանաքեռավան

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Առուվաճառքի պայմանագիր 25.04.2024թ. թիվ 7251, Համաձայնագիր 18/07/2024թ. գ/մ 6170

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-064-0419-0001
Մակերեսի չափը (հա)՝ 6.74544
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Վարելահող
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 24072024-07-0139, գաղտնաբառ՝ PI4GMAZXERVJ**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Էջ 1/2

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՏԻԳՐԱՆ ՉԱՀՄԱՆՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 24072024-07-0139, գաղտնաբառ՝ PI4GMAZXERVJ**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Կադաստրի կոմիտե

**էջ 2/2**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 24 հուլիսի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

## 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ

## 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Նոր Հաճն գյուղ Քանաքեռավան հողամաս

## 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի տարաժամկետ առուվաճառքի պայմանագիր 25.04.2024թ. N 7253, Համաձայնագիր 18.07.2024թ 6172

## 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-064-0384-0006
Մակերեսի չափը (հա)՝ 7.61723
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Վարելահող
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ՎԿԱՅԱԿԱՆ N 24072024-07-0138, գաղտնաբառ՝ Q8FUSLX9TYY2**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

Էջ 1/2

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/Հ | Կադաստրային ծածկագիր | Տեսակ | Մակերես | Գրանցված իրավունքի տեսակ |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԳՈՀԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

**ՎԿԱՅԱԿԱՆ N 24072024-07-0138, գաղտնաբառ՝ Q8FUSLX9TYY2**

*Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով*

## ՀԱՎԵԼՎԱԾ 2.  ՏԱՐԱԾՔԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՍԽԵՄԱ



# ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԼՈՒՍԱՊԱՏԿԵՐԻ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ՍԽԵՄԱ

Շինություններով ծանրաբեռնված հողամասերի գործառնական նշանակությունները նշվել է ըստ փաստացի օգտագործման

| | |
|---|---|
| Հաստատում եմ | ___ ___ 2025թ |
| Համայնքի ղեկավար | Կ.Տ. |
| | |
| անուն, ազգանուն | |



# ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԼՈՒՍԱՊԱՏԿԵՐԻ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ ՀԱՄԱԴՐՄԱՆ ՍԽԵՄԱ

| | |
|---|---|
| Հաստատում եմ | ______2025թ. |
| Համայնքի ղեկավար | Կ.Տ. |

Շինություններով ծանրաբեռնված հողամասերի գործառնական նշանակությունները նշվել է ըստ փաստացի օգտագործման



# ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԱՐԱԾՔԻ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐՈՎ

## ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | | |
|---|---|---|
| | | ՁԵՎ 1 |
| Սեփականատեր | Մարզ Կոտայք, համայնք Նոր Հաճն, գյուղ Քանաքեռավան | Հաստատում եմ ___.___ 2025թ. |
| «ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ | Մարզ, համայնք, բնակավայր | Համայնքի ղեկավար Կ.Տ. |
| | | |
| | [illegible] | անուն, ազգանուն, հայրանուն |




| | |
|---|---|
| Մակերես հա | 10.92916 |
| Ծածկագիր | 07-064-0353-0503 |
| Նպատակային նշանակություն | Գյուղատնտեսական |
| Գործառնական նշանակություն | Վարելահող |

*Լրացուցիչ նշումներ*

**Հողամասի**

| Շրջադարձային կետերի համարներ | Կոորդինատներ X | Կոորդինատներ Y | Գծային չափերը (մ) |
|---|---|---|---|
| 1 | 8458801.8460 | 4457045.1255 | 46.21 |
| 2 | 8458763.1175 | 4457070.3367 | 20.50 |
| 3 | 8458766.5228 | 4457090.5522 | 14.65 |
| 4 | 8458768.3875 | 4457105.0834 | 14.65 |
| 5 | 8458770.2522 | 4457119.6143 | 22.50 |
| 6 | 8458773.4943 | 4457141.8798 | 29.07 |
| 7 | 8458781.7545 | 4457169.7510 | 20.74 |
| 8 | 8458784.4144 | 4457190.3176 | 23.40 |
| 9 | 8458787.7953 | 4457213.4676 | 8.13 |
| 10 | 8458784.0633 | 4457220.6919 | 6.04 |
| 11 | 8458779.7120 | 4457224.8818 | 3.59 |
| 12 | 8458780.0895 | 4457228.4477 | 46.93 |
| 13 | 8458810.0265 | 4457264.5843 | |

Մասշտաբ 1:5000

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Արման Ավետիսյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0161 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «Արման Ավետիսյան» ԱՁ |
| ՀՎՀՀ | | 26558521 |
| Ստորագրություն | | |
| ամիս, ամսաթիվ | չափագրության | 29.01.2025 |
| | հատակագծի կազմման | 10.02.2025 |

Կ.Տ.

| Հողամաս | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 13 | 8458810.0265 | 4457264.5843 | 109.41 |
| 14 | 8458879.8247 | 4457348.8368 | 30.57 |
| 15 | 8458899.5245 | 4457372.3748 | 63.13 |
| 16 | 8458939.0210 | 4457421.4570 | 86.35 |
| 17 | 8458991.4072 | 4457490.0993 | 156.52 |
| 18 | 8459074.4054 | 4457622.8034 | 55.42 |
| 19 | 8459098.5700 | 4457672.7778 | 68.07 |
| 20 | 8459164.1990 | 4457655.4598 | 13.90 |
| 21 | 8459160.3181 | 4457642.1078 | 6.06 |
| 22 | 8459166.1282 | 4457640.3690 | 10.18 |
| 23 | 8459164.1910 | 4457630.3772 | 93.57 |
| 24 | 8459134.2564 | 4457541.5594 | 23.73 |
| 25 | 8459127.9438 | 4457518.8245 | 231.30 |
| 26 | 8459061.5510 | 4457297.2599 | 33.94 |
| 27 | 8459048.7359 | 4457265.8359 | 8.11 |
| 28 | 8459048.1116 | 4457257.7454 | 10.83 |
| 29 | 8459058.5268 | 4457254.7757 | 14.69 |
| 30 | 8459072.4029 | 4457249.9647 | 13.57 |
| 31 | 8459085.7929 | 4457252.1438 | 53.91 |
| 32 | 8459139.0442 | 4457260.5451 | 114.75 |
| 33 | 8459049.9073 | 4457188.2883 | 40.73 |
| 34 | 8459018.2663 | 4457162.6392 | 49.20 |
| 35 | 8458994.1043 | 4457119.7847 | 61.52 |
| 36 | 8459043.2385 | 4457082.7617 | 35.40 |
| 37 | 8459013.3695 | 4457063.7529 | 13.60 |
| 38 | 8459001.8261 | 4457056.5586 | 12.18 |
| 39 | 8458990.8211 | 4457051.3489 | 27.57 |
| 40 | 8458965.1407 | 4457041.3111 | 122.58 |
| 41 | 8458878.5450 | 4457128.0720 | 112.97 |
| 1 | 8458801.8460 | 4457045.1255 | |

| | | | |
|---|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | | Արման Ավետիսյան |
| Որակավորման վկայականի համարը | | | 0161 |
| Ստորագրություն | | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | | «Արման Ավետիսյան» ԱՁ |
| ՀՎՀՀ | | | 26558521 |
| Ստորագրություն | | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 29.01.2025 | |
| | հատակագծի կազմման | 10.02.2025 | Կ.Տ. |

Ձև 1

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| | | |
|---|---|---|
| Սեփականատեր | Մարզ Կոտայք, համայնք Նոր Հաճն, գյուղ Քանաքեռավան | Հաստատում եմ ___.___ 2025թ. |
| «ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ | Մարզ, համայնք, հասցե | Համայնքի ղեկավար Կ.Տ. |
| | Գործառնական նշանակություն | անուն, ազգանուն, հայրանուն |




| | |
|---|---|
| Մակերես հա | 6.74399 |
| Ծածկագիր | 07-064-0419-0001 |
| Նպատակային նշանակություն | Գյուղատնտեսական |
| Գործառնական նշանակություն | Վարելահող |

*Լրացուցիչ նշումներ*

Հողամասի

| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ X | Կոորդինատներ Y | Գծային չափերը (մ) |
|---|---|---|---|
| 1 | 8459055.5554 | 4457264.2698 | 32.29 |
| 2 | 8459068.0669 | 4457294.0351 | 20.00 |
| 3 | 8459073.7837 | 4457313.2010 | 20.00 |
| 4 | 8459079.5087 | 4457332.3644 | 20.00 |
| 5 | 8459085.2255 | 4457351.5302 | 20.00 |
| 6 | 8459090.9504 | 4457370.6936 | 20.00 |
| 7 | 8459096.6713 | 4457389.8583 | 20.00 |
| 8 | 8459102.3881 | 4457409.0241 | 20.00 |
| 9 | 8459108.1131 | 4457428.1875 | 20.00 |
| 10 | 8459113.8299 | 4457447.3534 | 20.00 |
| 11 | 8459119.5549 | 4457466.5168 | 20.00 |
| 12 | 8459125.2717 | 4457485.6826 | 20.00 |
| 13 | 8459130.9966 | 4457504.8461 | |

Մասշտաբ 1:5000

| | | | |
|---|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | | Արման Ավետիսյան |
| Որակավորման վկայականի համարը | | | 0161 |
| Ստորագրություն | | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | | «Արման Ավետիսյան» ԱՁ |
| ՀՎՀՀ | | | 26558521 |
| Ստորագրություն | | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 29.01.2025 | Կ.Տ. |
| | հատակագծի կազմման | 10.02.2025 | |

Ձև 1

| Հողամաս | | | |
|---|---|---|---|
| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Կողմերի չափերը (մ) |
| | X | Y | |
| 13 | 8459130.9966 | 4457504.8461 | 20.00 |
| 14 | 8459136.7134 | 4457524.0119 | 20.00 |
| 15 | 8459142.3605 | 4457543.1985 | 20.10 |
| 16 | 8459148.0467 | 4457562.4812 | 20.08 |
| 17 | 8459153.5997 | 4457581.7754 | 19.47 |
| 18 | 8459159.1876 | 4457600.4306 | 20.15 |
| 19 | 8459165.0360 | 4457619.7162 | 9.85 |
| 20 | 8459167.7398 | 4457629.1876 | 10.25 |
| 21 | 8459170.5537 | 4457639.0446 | 49.77 |
| 22 | 8459218.4180 | 4457625.3930 | 4.61 |
| 23 | 8459222.8375 | 4457624.0981 | 50.10 |
| 24 | 8459271.0071 | 4457610.3403 | 10.05 |
| 25 | 8459280.7063 | 4457607.7037 | 50.26 |
| 26 | 8459329.0948 | 4457594.1373 | 4.66 |
| 27 | 8459333.5967 | 4457592.9329 | 50.24 |
| 28 | 8459381.9361 | 4457579.2630 | 20.06 |
| 29 | 8459376.0353 | 4457560.0861 | 20.08 |
| 30 | 8459370.1638 | 4457540.8826 | 20.00 |
| 31 | 8459364.4479 | 4457521.7180 | 20.00 |
| 32 | 8459358.7220 | 4457502.5534 | 20.00 |
| 33 | 8459353.0011 | 4457483.3887 | 20.00 |
| 34 | 8459347.2803 | 4457464.2241 | 20.00 |
| 35 | 8459341.5594 | 4457445.0595 | 20.00 |
| 36 | 8459335.8385 | 4457425.8948 | 44.84 |
| 37 | 8459295.5979 | 4457406.1202 | 25.80 |
| 38 | 8459281.1419 | 4457384.7528 | 8.57 |
| 39 | 8459278.4314 | 4457376.6279 | 12.89 |
| 40 | 8459272.8196 | 4457365.0213 | 19.19 |
| 41 | 8459260.0735 | 4457350.6706 | 7.51 |
| 42 | 8459255.0867 | 4457345.0561 | 6.52 |
| 43 | 8459250.2009 | 4457340.7386 | 29.69 |
| 44 | 8459223.6353 | 4457327.4805 | 37.17 |
| 45 | 8459192.7532 | 4457306.7883 | 5.86 |
| 46 | 8459188.7268 | 4457302.5263 | 16.28 |
| 47 | 8459177.5436 | 4457290.6950 | 6.99 |
| 48 | 8459174.4360 | 4457284.4323 | 18.82 |
| 49 | 8459157.0167 | 4457277.3207 | 22.46 |
| 50 | 8459136.5406 | 4457268.0854 | 20.29 |
| 51 | 8459116.5479 | 4457264.6411 | 4.87 |
| 52 | 8459111.7481 | 4457263.8142 | 30.18 |
| 53 | 8459082.0034 | 4457258.6899 | 6.30 |
| 54 | 8459075.9719 | 4457256.8656 | |
| 1 | 8459055.5554 | 4457264.2698 | 21.72 |

| | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Արման Ավետիսյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0161 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «Արման Ավետիսյան» ԱՁ |
| ՀՎՀՀ | | 26558521 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 29.01.2025 |
| | հատակագծի կազմման | 10.02.2025 |

Կ.Տ.

| | | |
|---|---|---|
| | # ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | Ձև 1 |
| Սեփականատեր | Մարզ Կոտայք, համայնք Նոր Հաճն, գյուղ Քանաքեռավան | Հաստատում եմ ___ ___ 2025թ. |
| «ՍԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ | Մարզ, համայնք, հասցե | Համայնքի ղեկավար Կ.Տ. |
| | | |
| | Գործառնականի հիմքը | անուն, ազգանուն, հայրանուն |




| | |
|---|---|
| Մակերես հա | 7.61723 |
| Ծածկագիր | 07-064-0384-0006 |
| Նպատակային նշանակություն | Գյուղատնտեսական |
| Գործառնական նշանակություն | Վարելահող |

*Լրացուցիչ նշումներ*

**Հողամասի**

| Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատներ X | Կոորդինատներ Y | Գծային չափերը (մ) |
|---|---|---|---|
| 1 | 8458586.7184 | 4457382.0902 | 34.73 |
| 2 | 8458566.6742 | 4457410.4492 | 20.90 |
| 3 | 8458552.8843 | 4457426.1503 | 16.14 |
| 4 | 8458540.6962 | 4457436.7244 | 32.67 |
| 5 | 8458548.1380 | 4457468.5377 | 45.34 |
| 6 | 8458590.2856 | 4457485.2533 | 126.90 |
| 7 | 8458708.2433 | 4457532.0351 | 28.65 |
| 8 | 8458736.2674 | 4457537.9802 | 113.10 |
| 9 | 8458840.7436 | 4457581.3094 | 181.98 |
| 10 | 8459022.6959 | 4457578.3047 | 14.31 |
| 11 | 8459027.2670 | 4457564.7395 | 134.74 |
| 12 | 8458953.0809 | 4457452.2606 | 141.26 |
| 13 | 8458865.3832 | 4457341.5261 | |

| Մասշտաբ 1:5000 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Արման Ավետիսյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0161 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «Արման Ավետիսյան» ԱՁ |
| ՀՎՀՀ | | 26558521 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 29.01.2025 |
| | հատակագծի կազմման | 10.02.2025 |
| | | Կ.Տ. |

ՁԼ 1

| Հողամաս | | | |
|---|---|---|---|
| Եզրագծման (բեկման) կետեր | Կոորդինատներ | | Գծային չափերը (մ) |
| | X | Y | |
| 13 | 8458865.3832 | 4457341.5261 | 70.63 |
| 14 | 8458821.5329 | 4457286.1600 | 70.63 |
| 15 | 8458777.6826 | 4457230.7939 | 30.75 |
| 16 | 8458768.3517 | 4457260.0891 | 51.19 |
| 17 | 8458768.3866 | 4457311.2776 | 30.00 |
| 18 | 8458755.7614 | 4457338.4921 | 40.73 |
| 19 | 8458735.1352 | 4457373.6181 | 36.85 |
| 20 | 8458703.6983 | 4457392.8361 | 13.68 |
| 21 | 8458690.8269 | 4457397.4627 | 13.68 |
| 22 | 8458677.9555 | 4457402.0893 | 9.67 |
| 23 | 8458668.5838 | 4457404.4619 | 13.22 |
| 24 | 8458655.4158 | 4457405.6482 | 8.72 |
| 25 | 8458646.8744 | 4457403.8687 | 9.23 |
| 26 | 8458638.0365 | 4457401.1996 | 9.23 |
| 27 | 8458629.1986 | 4457398.5304 | 19.73 |
| 28 | 8458610.4550 | 4457392.3616 | 25.86 |
| 1 | 8458586.7184 | 4457382.0902 | |

| | | | |
|---|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | | Արման Ավետիսյան |
| Որակավորման վկայականի համարը | | | 0161 |
| Ստորագրություն | | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | | «Արման Ավետիսյան» ԱՁ |
| ՀՎՀՀ | | | 26558521 |
| Ստորագրություն | | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 29.01.2025 | Կ.Տ. |
| | հատակագծի կազմման | 10.02.2025 | |

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

| Ծրագրի գործողություններ | Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ | Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ | Պատասխանատու մարմին |
|---|---|---|---|
| **Ն Ա Խ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն   Փ ՈՒ Լ** | | | |
| 1. Հանրային լսումներ, հանրության իրազեկում | Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ: | 1.1. Նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացվել է 2024թ. նոյեմբերի 12-ին, ժամը՝ 15:00-ին, Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում:<br>1.2. Հանրային քննարկման հայտարարությունը օրենսդրությամբ սահմանված կարգով տպագրվել է «Առավոտ» օրաթերթի 15.10.2024 համարում: | Կապալառու |
| 2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում | ԲԿՊ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ շինարարության և շահագործման փուլերում: | 2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև կապալառուի պայմանագրային փաստաթղթերում: | Կապալառու |
| **Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն   Փ ՈՒ Լ** | | | |
| **Առողջություն և աշխատանքային անվտանգություն** | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները | ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և շենքերի կառուցման բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշաճ կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է: | 3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:<br>3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ):<br>3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն):<br>3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում:<br>3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում:<br>3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):<br>3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել:<br>3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:<br>3.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը: | Կապալառու |

| | | | |
|---|---|---|---|
| **Հանրության հետ կապ և հանրային իրազեկում** | | | |
| 4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ | Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ: | 4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին:<br>4.2. Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին՝ հարցի լուծման վերաբերյալ: | Կապալառու |
| **Շրջակա միջավայրի պահպանություն** | | | |
| 5. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ | 1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործումից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը;<br>2. Շին. աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճի հետևանքով ազդեցությունը:<br>3. Շինարարական տեխնիկայի անսարքության հետևանքով հողային ռեսուրսների հնարավոր աղտոտումներ:<br>4. Կենդանական և բուսական աշխարհի վրա հնարավոր ազդեցություններ: | *5.1.* ***Օդի աղտոտման և փոշու կառավարում***<br>*5.1.1.* Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում:<br>*5.1.2.* Օդի որակի չափագրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում:<br>*5.1.3.* Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար;<br>5.1.4. Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով<br>5.1.5. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով: | Կապալառու |

| | | | |
|---|---|---|---|
| | | 5.1.6. Անհրաժեշտ է ապահովել շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացումը:<br>5.1.7. Անհրաժեշտ է ցանկապատել շինարարական հրապարակը, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,<br>5.1.8. Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով,<br>5.1.9. Հղկման աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ:<br>5.1.10. Անհրաժեշտ է շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայր և հատուկ սահմանված երթուղով:<br>5.1.11. Արգելվում է նաև այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները:<br>*5.2. **Աղմուկի և թրթռումների կառավարում***<br>5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափագրումներ կիրականացվեն ըստ սահմանված ժամանակացույցի:<br>5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին՝ սամանափակվելով միայն թույլատրված ժամերի միջակայքում:<br>5.2.3. Մեքենաների ապահովվում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում: | |

| | | | |
|---|---|---|---|
| | | 5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում:<br>5.3. ***Յուղերի, քսանյութերի և վառելիքի արփահոսքի բացառում***<br>5.3.1. Շինարարության մեջ ներգրավված տեխնիկան և մեքենա-սարքավորումները պետք է լինեն տեխնիկապես սարքին վիճակում:<br>5.3.2. Շինարարության մեջ ներգրավված տեխնիկան և մեքենա-սարքավորումները պարբերաբար պետք է անցեն տեխնիկական ստուգում, իսկ լիցքավորումը իրականացվի շինհրապարակի տարածքից դուրս՝ մասնագիտացված ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից՝ բացառելով վառելանյութերի և քսայուղերի արտահոսքը շին հրապարակի տարածքում:<br>5.4. **Կենսաբազմազանության պահպանություն**<br>5.4.1. Հանված բուսահողի պատշաճ պահպանում և հետագա օգտագործում կանաչապատման աշխատանաների ժամանակ:<br>5.4.2. Վտանգված կամ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների հանդիպելիս անհրաժեշտ է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով: | |
| **Շինարարական հրապարակի կազմակերպում** | | | |
| 6. Շինհրապարակի կազմակերպում | Շինհրապարակի ոչ ճիշտ կազմա-կերպումից բխող ազդեցություններ | 6.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում:<br>6.2. Շին. հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շին. նյու-թերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն: | Կապալառու |

| | | | |
|---|---|---|---|
| | | 6.3. Անհրաժեշտ է նախատեսել ավազի, ցեմենտի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների, ինչպես նաև շինարարական աղբի պահեստավորումը փակ տարածքներում կամ դրանց ծածկումն անթափանց թաղանթներով:<br>6.4. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:<br>6.5. Անհրաժեշտ է իրականացնել շենքի ծածկումը շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:<br>6.6. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախազգուշացնող նշաններ:<br>6.7. Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակի տարածքից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված լվացման կետերում: | |
| **Երթևեկության կառավարում** | | | |
| 7. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ | Երթևեկության հնարավոր ազդեցություններն են.<br>• երթևեկության խափանումներ<br>• երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ<br>• փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ<br>• հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում | 7.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով;<br>7.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը:<br>7.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով: | Կապալառու |

| | | | |
|---|---|---|---|
| | • շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհներին վնաս | 7.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:<br>7.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:<br>7.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:<br>7.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր զննում՝ վառելանյութի և յուղի արտահոսքը կանխելու համար:<br>7.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և դրանք փոխարինել պատշաճ վիճակում գտնվող մեքենաներով: | |
| **Արտակարգ իրավիճակների կառավարում** | | | |
| 8. Վտանգավոր նյութերի օգտագործում և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն) | Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ: | 8.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;<br>8.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:<br>8.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին;<br>8.4. Վտանգավոր նյութերն ու վառելանյութն պետք է պահել ծածկված, ապահով և բնական ճանապարհով օդափոխվող տարածքում՝ ապահովված անթափանց հատակով և պատնեշով:<br>8.5. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը: | Կապալառու |

| | | | |
|---|---|---|---|
| | | 8.6. Շին. աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:<br>8.7. Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:<br>8.8. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:<br>8.9. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:<br>8.10. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն համապատասխան գրանամատյանում: | |
| **Թափոնների և նյութերի կառավարում** | | | |
| 9. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ | Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները | 9.1. Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: | Կապալառու |

| | | | |
|---|---|---|---|
| | և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ: | 9.2. Կանոնավոր կերպով (ամենաուշը 3 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթևեկության խոչընդոտները կանխելու համար;<br>9.3. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին. աղբի նախնական կուտակման վայր:<br>9.4. Շինարարական աղբը անհրաժեշտ է տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր՝ հատուկ սահմանված երթուղով:<br>9.5. Շինարարակում հավաքված վտանգավոր թափոնները պետք է պատշաճ կերպով հավաքվեն և հեռացվեն համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:<br>9.6. Պետք է կատարվեն թափոնների հեռացման վերաբերյալ համապատախան գրանցումներ/գրառումներ՝ որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ և նախատեսվածի համաձայն:<br>9.7. Կենցաղային աղբի հավաքումը պետք է իրականացվի դրա համար նախատեսված տարրաներում և պարբերաբար հեռացվի համապատասխան աղբահավաք կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:<br>9.8. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին. աղբի կուտակումը շինհրապա-րակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը: | |
| **Աշխատողների վերապատրաստում** | | | |
| 10. Աշխատողների վերապատրաստում | Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ: | 10.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն; | Կապալառու |

| | | | |
|---|---|---|---|
| | | 10.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է իրազեկել աշխատանքի անվտանգության և տարբեր արտակարգ իրավիճակների դեպքում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ; | |
| **Աշխատանքային տեղամասի վերականգնում, բարեկարգում, տարածքի կանաչապատում** | | | |
| 11. Շինհրապարակի վերականգնում, տարածքի բարեկարգում<br>12. Կանաչապատում | Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը , թափոնները և այլն: | 12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն:<br>12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;<br>12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;<br>12.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները:<br>12.5. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ դրանք համաձայնեցնելով Նաիրիի համայնքապետարանի հետ: | Կապալառու |
| **ՀԵՏՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ** | | | |
| 13. Ծերությունների վերացման աշխատանքներ | Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները | 13.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճած իրականացումը: | Կապալառու |

# ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

| **Վայր/ Գործողությու ն/ Փուլ** | **Մոնիտորինգի ենթակա պարամետրեր** | **Մոնիտորինգի կետեր** | **Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ** | **Բնապահպանական գործողությունների ցուցանիշ** | **Պատասխ անատուն ր** | **Մոնիտորինգի հաճախականու թյուն** |
|---|---|---|---|---|---|---|
| **Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն  Փ ՈՒ Լ** | | | | | | |
| 1. Հանրային լսումներ և կապը հանրության հետ | - Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ<br>- Ազդակիր կողմերի տեղեկացվածությունտ ԲԱՄ-ի վերաբերյալ | Գործունեության տարածք | - փաստաթղթերի ստուգումներ,<br>- տուգայցեր շին տեղամասեր,<br>- հանրային լսումներ,<br>- բողոքների գրանցամատյանի ստուգումներ | Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է բոլոր պահանջներին համապատասխան | Կապալառու | Հանրային լսումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը |
| 2. Շրջակա միջավայրի պահպանություն | - փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ,<br>- աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում<br>- վառելանյութերի և քսայուղերի հնարավոր արտահոսք<br>- կենսաբազմազանության պահպանություն | Գործունեության տարածք | - ակնադիտական ստուգումներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով,<br>- բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում,<br>- փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային չափում և վերլուծություն,<br>- ակնադիտական ստուգումներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով:<br>- ֆլորայի և ֆաունայի արժեքավոր տեսակների կամ ծառատեսակների իդենտիֆիկացում, եթե կան այդպիսիք: | - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը,<br>- փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում,<br>- շինհրապարակի տարածքում ակնադիտական ստուգմամբ վառելանյութերի և քսայուղերի արտահոսքի հետքեր չեն հայտնաբերվել:<br>- տեսակի անվանում, քանակ, նկարագիր, տեղադիրք: | Կապալառու | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր | - շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը: | Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ: | - փաստաթղթերի ստուգում | - Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից թույլատրված տարածքին,<br>- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը | Կապալառու | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |
| 4. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը | - երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը;<br>- հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհներին և այլ կառույցներին պատճառվող վնասներ: | Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շին. հրապարակի մոտեցման մուտքերը | - փաստաթղթերի ստուգում,<br>- շինհրապարակ կատարած ստուգայցեր | - երթևեկության և մոտեց-ման ուղիների համապատասխանությունը,<br>- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը | Կապալառու | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |
| 5. Թափոնների և շին. նյութերի կառավարում | - Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը շինարարության ընթացքում | շին. հրապարակ | - փաստաթղթերի ստուգում,<br>- շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր | - շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակները կառավարվում են Պլանին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում,<br>- թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է: | Կապալառու | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |
| 6. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, | - շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, | Տեղամասեր կատարած ստուգայցեր | - Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով | - Պահպանված են շինհրապարակի որակի, բանվո- | Կապալառու | Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվտանգությա ն կանոնների, սանիտարահիգ իենիկ կանոնների պահպանում, կանաչապատու մ և տարածքի բարեկարգում | - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածք-ները վերականգնված են,<br>- շինհրապարակի տա-րածքը բարեկարգված է: | | հաստատված «Կազմակերպություննե-րում աշխատողների սանիտարակենցա-ղային սենքերի» N 2.2.8-003-12 սանի-տարական կանոնների և նորմերի պահանջներին:<br>- Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգութ-յան կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է:<br>- Շինհրապարակի վերականգնման և բարեկարգման պլանն առկա է:<br>- Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամա-նակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը: | րական հագուստի կուլտու-րայի, անվտանգության կա-նոնները,<br>- ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքա-վորումները հեռացված են շինհրապարակից, | | |
| **ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ) ՓՈՒԼ** | | | | | | |
| 7. Տարածքի բարեկարգում | Ծփերի և այլ բուսա-կանության նորմալ աճ | Բարեկարգման բոլոր տեղամասերը | Ստուգայցեր | Ծփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ | Կապալառու | Շինարարության ավարտից հետո |

# ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

*Նախագիծ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔ
(համայնքի անվանումը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N ___ «18» 04 2025թ.

Օբյեկտ [illegible]
[illegible]

«Աշխատանքային նախագիծ», (IV կատեգորիա) նախագծային փաստաթղթերի մշակման համար
[illegible]

Գտնվելու վայրը Կոտայքի մարզ, Նոր Հաճն համայնք, գյուղ Քանաքեռավան, ծածկագիր 07-084-0353-0503
[illegible]

Կառուցապատող «ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ
[illegible]

Առաջադրանքի տրամադրման հիմքը ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 46-րդ կետ
[illegible]

Առաջադրանքի գործողության ժամկետը 30 [illegible]
[illegible]

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

[illegible]

1. Հողամասը գտնվում է [illegible]
2. (*) Հողամասի չափերը 10.92954հա
3. Հողամասի առկա վիճակը [illegible]
4. (*) Տրանսպորտային սպասարկումը [illegible]
5. (*) Ինժեներական ցանցերը և սարքավորումները (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) [illegible]
6. (*) Կից հողամասեր [illegible]
7. Օտարման ենթակա կառույցներ և (կամ) պատմամշակութային հուշարձաններ, տարածքներ (պահպանական գոտիներ) ___
8. (*) Հատուկ պայմանները [illegible]

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

[illegible] (*) [illegible] (Մ 1:500)

9. [illegible] պահանջներ — [illegible]

[illegible]

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) — [illegible]

9.2. (*) հեռավորությունը հարևան հողամասերից (օբյեկտներից) (մետր) — ———

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) — [illegible] 12մ

9.4. [illegible] — ———

9.5. կառուցապատման տոկոսը [illegible] (%) — 40 %

9.6. կանաչապատման տոկոսը [illegible] (%) — 60 %

9.7. այլ պահանջներ — [illegible]

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և այլընտրանքների հնարավորությունը — ———

11. [illegible] — ———

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ — [illegible]

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում — Կցվում է ____________
[illegible]

12.2. (*) էլեկտրամատակարարում — Կցվում է ____________
[illegible]

12.3. (*) գազամատակարարում — Կցվում է ____________
[illegible]

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության [illegible] — Կցվում է ____________
[illegible]

12.5. այլ [illegible] — ____________

12.6. [illegible] — [illegible]

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — չի պահանջվում
[illegible]

14. Բարեկարգում — [illegible]
[illegible]

15. [illegible]

[illegible]

16. [illegible]

[illegible]

17. Հակահրդեհային պահանջներ

[illegible]

18. [illegible]

19. Շրջակա միջավայրի պահպանում

[illegible]

20. Շինարարության կազմակերպում

[illegible]

21. [illegible]

«Աշխատանքային նախագիծ», 12 (տասներկու) ամիս

[illegible]

[illegible] ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. [illegible]

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան

[illegible]

23. Միջանկյալ համաձայնեցում

[illegible]

24. [illegible]

ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 660 որոշման [illegible]

[illegible]

25. [illegible]

[illegible]

26. [illegible]

27. Այլ պայմաններ

[illegible]

[illegible]

*Նախագիծ*

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔ

(մարզ, համայնք)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N «18» 04 2025թ.

Օբյեկտ բարձրահարկ բազմաբնակարանային շենքեր, բնակելի տներ, բազմաֆունկցիոնալ համալիր (բնակելի նշանակության շինություն) և օժանդակ շինություններ

«Աշխատանքային նախագիծ» (IV կատեգորիա) նախագծային փաստաթղթերի մշակման համար

Գտնվելու վայրը Կոտայքի մարզ, Նոր Հաճն համայնք, գյուղ Բալահովիտ, ծածկագիր 07-064-0419-0001

Կառուցապատող «ՄԱԳՆՈՒԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ

Առաջադրանքի տրամադրման հիմքը ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 46-րդ կետ

Առաջադրանքի գործողության ժամկետը 36 (երեսունվեց) ամիս

(N 1 ավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

| | |
|---|---|
| 1. Հողամասը գտնվում է | Բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողամաս |
| 2. (*) Հողամասի չափերը | 6,74544հա |
| 3. Հողամասի առկա վիճակը | բարեկարգ, ազատ, ... |
| 4. (*) Տրանսպորտային պայմանները | համայնքային նշանակության ճանապարհ |
| 5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) | հարակից տարածքով անցնող, ջրագիծ, կոյուղագիծ, գազամատակարարման համակարգ, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր |
| 6. (*) Կից հողամասեր | Հարևան հողամասեր, ճանապարհ |
| 7. Ընդերքի հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) | — |
| 8. (*) Հատակագծային սահմանափակումներ | նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի |

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

*(աստղանիշով (*) նշված դաշտերի գրաֆիկական ատտացույցը ներկայացվում է կից ներկայացվող սխեմայի միջոցով՝ Մ 1:500)*

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ — ***ենթակա են ՀՀ գործող նորմերին համապատասխան՝ ըստ միջավայրի պայմանների***

(նշելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներից, ինչպես քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կարգավորվող (կառուցվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր) — ***Պահպանել փողոցի կառուցապատման գիծը***

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր) — —

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր) — ***Շինությունների առավելագույն բարձրությունը 12մ***

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) — —

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անշրջանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%)) — 40 %

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%)) — 60 %

9.7. այլ պահանջներ — ***հաշվի առնել միջավայրի քաղաքաշինական առանձնահատկությունները, հատակագծային լուծումները ըստ պատվիրատուի առաջադրանքի***

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը — —

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները — —

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ — Նախագծերը փորձաքննություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ. ***Համաձայն պատվիրատուի առաջադրանքի միացնել գոյություն ունեցող ինժեներական ցանցերին, անհրաժեշտության դեպքում համաձայնեցնել իրավասու կազմակերպությունների հետ***

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում — Կցվում է ____
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում — Կցվում է ____
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում — Կցվում է ____
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը — Կցվում է ____
(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված եղանակով տրվող տվյալների)

12.5. թույլ հոսանքներ — ____

12.6. աղբահանություն — ***Կնքել համապատասխան պայմանագիր աղբահանություն իրականացնող կազմակերպության հետ***

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում — չի պահանջվում
(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումներ)

14. Բարեկարգում — ***պահպանել հողակտորի տարածքի մաքրությունը, կանաչապատումը, բարեկարգումը***
(ամբողջական պատկերի ապահովման միջոցառումներ, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, լուսավորում, ցանկապատ և այլն)

15. Շինարարական նյութեր — Քար, երկաթ/բետոն, տուֆ, բազալտ, կոպտատաշ քարե շար, մետաղ, ապակի, փիրեղ, և այլ ժամանակակից նյութեր
(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ — շինարարության ընթացքում [illegible] և [illegible] անհրաժեշտ պաշտպանական միջոցներ
(առանձնակի հրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ — ապահովել հակահրդեհային նորմատիվ պահանջները
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի պաշտպանության միջոցառումներ

19. Շրջակա միջավայրի պահպանում — [illegible] միջոցառումներ, որը [illegible] շրջակա միջավայրի վրա, [illegible]
(շրջակա միջավայրի պահպանման միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում — [illegible]
(առաջարկություններ շինարարության հետ կապված [illegible])

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը — «Աշխատանքային նախագիծ», 12 (տասներկու) ամիս
(նշված են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ — Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծի երաշխավորությունը՝ ըստ կառուցվող համապատասխան [illegible])

23. Միջանկյալ համաձայնեցում — ____
([illegible])

24. Համայնքային քննարկումներ — ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում — նախագիծը համաձայնեցնել Նոր Հաճնի համայնքապետարանի հետ և [illegible]
([illegible])

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում — ____

27. Այլ պայմաններ — ____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ.Տ.

Գ. ՄԱԳԵՎՈՍՅԱՆ
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

*Նախագիծ* Ձև N 1-2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔ

(մարզ, համայնք)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N «18» 04 2025թ

Օբյեկտ [illegible]

«Աշխատանքային նախագիծ» (IV կատեգորիա) նախագծային փաստաթղթերի մշակման համար

Գտնվելու վայրը Կոտայքի մարզ, Նոր Հաճըն համայնք, [illegible], ծածկագիր 07-064-0386-0006

Կառուցապատող «ՄԱԿՆՈՒՄ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ

Առաջադրանքի տրամադրման հիմքը ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 46-րդ կետ

Առաջադրանքի գործողության ժամկետը 36 (երեսունվեց) ամիս

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Հողամասը գտնվում է Բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման հողերում.
2. (*) Հողամասի չափերը 7,61723հա
3. Հողամասի առկա վիճակը [illegible]
4. (*) Երաշխավորված պահանջները [illegible]
5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր) [illegible] համակարգ. Էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր
6. (*) Կից հողամասեր Հարևան հողամասեր, ճանապարհ
7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) —
8. (*) Համապատասխան սահմանափակումներ նախագիծը մշակել համաձայն տրված առաջադրանքի

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

[illegible] (*) [illegible] 1:1 000

| | |
|---|---|
| 9. [illegible] | [illegible] |
| 9.1. (*) [illegible] | [illegible] |
| 9.2. (*) [illegible] | — |
| 9.3. [illegible] | [illegible] |
| 9.4. [illegible] | — |
| 9.5. [illegible] (%) | 40 % |
| 9.6. [illegible] (%) | 60 % |
| 9.7. [illegible] | [illegible] |
| 10. [illegible] | — |
| 11. [illegible] | — |
| 12. (*) [illegible] | [illegible] |
| 12.1. (*) [illegible] | Կցվում է [illegible] |
| 12.2. (*) [illegible] | Կցվում է [illegible] |
| 12.3. (*) [illegible] | Կցվում է [illegible] |
| 12.4. (*) [illegible] | Կցվում է [illegible] |
| 12.5. [illegible] | |
| 12.6. [illegible] | [illegible] |
| 13. [illegible] | չի պահանջվում [illegible] |
| 14. [illegible] | [illegible] |

15. [illegible] — [illegible]

16. [illegible] — [illegible]

17. [illegible] — [illegible]

18. [illegible] — ______

19. [illegible] — [illegible]

20. [illegible] — [illegible]

21. [illegible] — «[illegible]», 12 ([illegible]) ամիս

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

22. [illegible] — Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի № 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան

23. [illegible] — ______

24. [illegible] — ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 860 որոշման պահանջների համաձայն

25. [illegible] — [illegible]

26. [illegible] — ______

27. [illegible] — ______

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ. Տ.

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ



Առավոտ

15.10.2024

**ԿՈՐԵԼ Է**

Նաիրա Արամայիսի Ավագյանի՝ ԵՊՀ-ից 1993 թ. ստացված թիվ A 042988 դիպլոմը, գրանցման թիվ 64676 և 2000 թ ստացված թիվ A 062985, գրանցման թիվ 68916: Համարել անվավեր:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023թ դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2024թ նոյեմբերի 12-ին ժամը 15:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Քանաքեռավան բնակավայրի վարչական շենքում տեղի կունենա «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ի բնակելի թաղամասի կառուցման նախատեսվող աշխատանքների հանրային քննարկումներ (1-ին հանրային քննարկում):

ՀՀ կառավարության 2023թ դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման պահանջներով սահմանված [illegible] «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ին [illegible] 1 [illegible] 2/3 [illegible] Կոտայքի մարզ, Նոր Հաճնի համայնք [illegible] 07-064-0384-0006, 07-064-0353-0435, 07-064-0353-0436 և 07-064-0419-0001 հողամասերում (մակերեսը՝ 26.6 հա), [illegible] 56 000ք մ [illegible] 60 [illegible] 100 [illegible] 5330 [illegible]

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշման հավելվածի 2024թ. [illegible] 30-ին ժամը 11:00-ին Երևան քաղաքի Էրեբունի վարչական [illegible] (հ 67) [illegible] ՍՊԸ [illegible] N-1 [illegible] (2-րդ լսում) [illegible] (www.env.am), [illegible] «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք. Երևան, [illegible] 1/3, էլ.փոստ՝ expertise@env.am)

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2024թ. նոյեմբերի 12-ին ժամը 15:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Քանաքեռավան բնակավայրի վարչական շենքում տեղի ունեցած «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ի բնակելի թաղամասի կառուցման նախատեսվող աշխատանքների հանրային քննարկումների /I-ին հանրային քննարկում/ վերաբերյալ.

գ. Քանաքեռավան 12.11.2024թ.

Հանրային քննարկմանը մասնակցում էին Նոր Հաճն համայնքի Քանաքեռավան բնակավայրի վարչական ղեկավար Հ. Քամալյանը, «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ի ֆինանսական տնօրեն Հ. Հակոբյանը, Ընկերության ներկայացուցիչներ Վ. Ավետիսյանը, Ռ. Իսահակյանը և այլն:

Նիստը վարեց Քանաքեռավան բնակավայրի վարչական ղեկավար Հ. Քամալյանը: Նախատեսվող գործունեության վերաբերյալ ելույթ ունեցան «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները: Ընկերության ներկայացուցիչները ներկայացրեցին հրավիրված քննարկման նպատակը, որը կարգավորվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքին և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան: «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ն ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի Քանաքեռավան բնակավայրում նախատեսում է իրականացնել բնակելի թաղամասի կառուցման աշխատանքներ: Հայցվող հողակտորների ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 26հա, որից կառուցապատվելու է մոտ 66000ք.մ: Կառուցվելու է 63 հատ մասնաշենք, մոտ 4600 հատ բնակարանով: Բնակարանների մակերեսները տատանվելու են 50-85ք.մ սահմաններում, կառուցման ընդհանուր մակերեսը՝ 458000ք.մ: Իրականացվելու է նաև կանաչապատման աշխատանքներ: Կառուցապատումն իրականացվելու է փուլ առ փուլ:

Կենցաղային կոյուղու ներքին ցանցը իրականացվում է համապատասխան ճարտարապետական հատակագծային լուծումների: Կանգնակները կայանատեղի առաստաղի տակով կապվում են միմյանց և դրսում միանում համապատասխան դիտահորերին:

Ներքին ջրամատակարման ներքին ցանցը ավտոկայանատեղիից պոմպերի միջոցով ջուրը կանգնակներով մղում է դեպի վերևի հարկեր: Իսկ արտաքին ցանցը միանալու է տեխնիկական պայմանով տրված միացման կետին և այնտեղից բերվի դեպի կառույց, որտեղից էլ միանա ներքին ցանցի պոմպերին և հակահրդեհային ջրամբարին:

Շինությունների տարածքում նախատեսվելու է հրդեհի ինքնավար հայտնաբերման և ազդարարման համակարգ (ՀԻՀԱՀ)՝ համաձայն ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ II-8.04.02.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա», ՀՀՇՆ IV-11.03-03-02 (ՄՍՆ 2.02-05-2000) «Ավտոկայանատեղեր», ինչպես նաև ՀՀ-ում գործող այլ շինարարական նորմերի պահանջների: Համակարգի համապատասխան հատվածներն ինտեգրվելու են էլեկտրավահանակային ու հեռահաղորդակցության սենյակների ինքնավար հրդեհաշիջման համակարգի հետ: ՀԻՀԱՀ-ը պետք է ունենա օդափոխության և ծխահեռացման համակարգերին ինտեգրման հնարավորություն:

Ներքին լուսավորության իրականացում համաձայն ՀՀՇՆ 22-03-2017 «Արհեստական և բնական լուսավորում» ինչպես նաև ՀՀ-ում գործող այլ շինարարական նորմերի պահանջների: Լուսավորության ցանցն իր մեջ պետք է ներառի միմյանցից անկախ սնվող և գործող աշխատանքային և տարահանման–վթարային լուսավորության ցանցեր: Ներքին լուսավորության ցանցի նախագծման համար նախատեսել լուսադիոդային լուսատուներ: Վերջինների ընտրության ժամանակ հաշվի առնել ՀՆ N 2.2.4-008-06 «Աշխատատեղերում ինֆրաձայնի հիգիենիկ նորմերը», ՀՆ N 2.2.4-010-06 «Աշխատատեղերում ուլտրաձայնի հիգիէնիկ նորմերը» և կիրառել ՀՀ կառավարության 2021 թ. հունվարի 21-ի N 77 որոշումը: Էներգախնայողության բարձրացման նպատակով սենքերում լուսավորության ցանցն իրականցնել առանձին խմբերով, իսկ աստիճանավանդակներում և ստորգետնյա ավտոկայանատեղիներում նախատեսել շարժման տվիչներ:

Ներքին էլեկտրամատակարարման ցանցի իրականացում: Նախատեսել վարդակային ցանցեր աշխատանքային և կենցաղային սարքերի սնուցման համար: Առանձին խմբով սնուցումներ նախատեսել ՀԻՀԱՀ, ՏՀՁՀ և ԻՑ սնուցման համար:

Ներքին էլեկտրամատակարարման և լուսավորության ցանցերն իրականացնել եռաջիղ հաղորդալարերով/մալուխներով՝ երրորդ ջիղն օգտագործելով հողանցման համար: Լարանցումն իրականացվելու է փակ, կախովի առաստաղների հատվածում՝ ծալքախողովակների մեջ: ՆէԼ ցանցերի սնուցման համար հարկերում նախատեսել հարկային լուսավորության վահաններ՝ նվազագույնը մեկ հատ յուրաքանչյուր հարկում:

Նախատեսվելու են առանձին ուժային մալուխներ վերելակի, օդափոխության համակարգերի և հարկային լուսավորության վահանների էլեկտրամատակարարում համար: Էլ. վահանակային սենյակից ուժային մալուխների խմբային անցկացումն իրականացնել հատուկ դրա համար նախատեսված հորանի միջով:

Շինությունների հարակից տարածքում նախատեսվելու է հողանցման կոնտուր՝ կրկնակի հողանցման համակարգի համար:

Իրականացվելու է ավտոկայանատեղիների, միջանցքների, շինության արտաքին տարածքի, գլխավոր և օժանդակ մուտքերի տեսաձայնագրում, իրական ժամանակում

առցանց տեսահսկման հնարավորությամբ: Նախատեսվելու են HD որակի տեսախցիկներ՝ գիշերային տեսաձայնագրման հնարավորությամբ:

Բացօթյա ավտոկայանատեղիների համար նախատեսվում է հատկացնել մոտ 44000ք.մ տարածք (2200 հատ մեքենայի համար): Ավտոկայանատեղի ջեռուցումը կապահովի 5 աստիճան: Ջեռուցումը կկազմակերպվի օդով ջեռուցման ագրեգատներով:

Շենքերը նախատեսվում է իրականացնել ե/բ մոնոլիտ հիմնակմախքով, որտեղ նախատեսվում է իրականացնել տրավերտին, տուֆե և ներկանյութի համադրությամբ երեսպատմամբ:

Քննարկման մասնակիցների կողմից չեղան դիտողություններ և հարցեր, ներկա գտնվողներն ողջունեցին նախատեսվող գործունեությունը:

Ամփոփելով լսումների արդյունքները Ընկերության ներկայացուցիչը հավաստիացրեց, որ հետագայում բնակավայրի վարչական տարածքում գործունեություն իրականացնելու դեպքում ընկերությունը պատրաստ է համայնքում սոցիալական ծրագրեր իրականացնելու համար:

Քննարկումների պատասխանատու՝

Վարչական ղեկավար Հ. Քամալյան

Արձանագրող՝ Ա. Բաբայան

«Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Հ. Հակոբյան

Մասնակիցների ցանկ

«[illegible]» ՍՊԸ-ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] քննարկման։ Հոկտեմբերի 12-ին ժամը 15:00-ին։

1) [illegible] [illegible] [illegible] [illegible] 091421042.
2) [illegible] [illegible]
3) [illegible] [illegible] 093230055
4) [illegible] [illegible] 041057711
5) [illegible] [illegible] 096723235
6) [illegible] [illegible] 099406555.
7) [illegible] [illegible] 04366653

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 դեկտեմբերի 2024 թվականի N 120-Ա

## «ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1- ին մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման N 1 հավելվածի 28-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումի հիման վրա կայացած հանրային լսման արձանագրությունը՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1.Տրամադրել նախնական համաձայնություն «Մագնոլիա Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից Նոր Հաճըն համայնքում բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների իրականացմանը

2.Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

Կողմ -17 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱԿՈՂԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

[illegible]

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ՊԱՊՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՕՁՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

# ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ




I ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ
Մ 1:200
Բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագիծ
REFORM
Ա. Մինոյան
Ռ. Իսահակյան
6600
6900

# Տիպային հարկի հատակագիծ
Մ 1:200



# ՀԱՎԵԼՎԱԾ 10. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ

**Ամերիաբանկ ՓԲԸ**
Վազգեն Սարգսյան 2
Հեռախոս՝(+37410) 561111
Ֆաքս՝
Էլ. փոստ՝info@ameriabank.am

Տպված է 31/03/2025 17:03 (UTC+04:00)

**Բյուջետային փոխանցում N 008664**

| | | | |
|---|---|---|---|
| Ամսաթիվ | **11/03/2025** | Նույնացուցիչ | **ca5479ea-7bd3-4df4-a47b-4ec4cde40b1c** |
| Հաշիվ | 1570077028610100 | Գումար | |
| **Շահառուի հաշիվ** | **900005000196** | AMD | **300,000.00** |

| | |
|---|---|
| Վճարողի անվանում | **«ՄԱԳՆՈԼԻԱ ԿՈՄՖՈՐՏՍ» ՍՊԸ** |
| Վճարողի բանկ | **Ամերիաբանկ** |
| ՀՎՀՀ | **02670983** |
| Տարածաշրջանային կոդ [?] | **18** |
| Շահառուի անվանում | **Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն** |
| Ինքնաբերաբար [?] | **Ոչ** |
| Գումարը բառերով | **Երեք հարյուր հազար դրամ** |
| Շտապ փոխանցում | **Ոչ** |
| Նպատակ | **«Մագնոլիա Կոմֆորտս» ՍՊԸ, ՀՎՀՀ 02670983, տնօրեն Ա. Ալեքսիկյան, Քննաքեռավանի փորձաքննության համար** |
| [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] |
| [illegible] | [illegible] |

Կատարված է

# ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԽԵՄԱ



# ՀԱՎԵԼՎԱԾ 12. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

